



Ծրագրային համագործակցության կառուցվածք
Հայաստանի, Ադրբեջանի, Կիստանի, Սերբիայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded
by the European Union
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



Implemented
by the Council of Europe

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՅՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՎԱՆԱՁՈՐ 2016



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ ՀՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՎԱՆԱՁՈՐ 2016

Խմբագիր՝ Արթուր Սաքունց
Յեղիևակ՝ Վարդինե Գրիգորյան

Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի միջոցներով: Սույն զեկույցում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում ֆինանսավորող կազմակերպությունների պաշտոնական տեսակետները:

Չեկույցը հիմնված է 2015թ. Յելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից հրապարակված «ԸՄԴԱ-ների հանձնարարականների իրականացումը Հայաստանում 2003-2013թթ. գնահատման զեկույցի» վրա:

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

«Տեղական դիտորդական կազմակերպությունների կարողությունների ուժեղացում» ծրագիրը «Երկարաժամկետ ընտրական աջակցություն Հայաստանում ընտրություններին առնչվող շահագրգիռ կողմերին» ծրագրի բաղադրիչներից մեկն է: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի Արևելյան գործընկերության երկրների համար 2015-2017թթ. Ծրագրային համագործակցության կառուցակարգի շրջանակներում:

Բովանդակություն

Հապավումներ	6
Ներածություն.....	7
Գլուխ 1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրություն ...	9
Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին ՀՀ օրենք, 1991թ.	9
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենք, 1995 թ.	11
Հանրապետության նախագահի ընտրության մասին ՀՀ օրենք, 1996թ.	12
ՀՀ Ընտրական օրենսգիրք, 1999թ.....	15
ՀՀ Ընտրական օրենսգիրք, 2011թ.....	20
Գլուխ 2. ՀՀ ընտրական օրենսգիրք, 2016թ.	25
Գլուխ 3. Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների և միջազգային չափանիշների արտացոլումը նոր ընտրական օրենսգրքում	36
Եզրակացություն	58
Օգտագործված գրականության ցանկ	59
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին	60

Չապավուճներ

ԱԺ – Ազգային ժողով

ԵԱՅԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵԽԽՎ – Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

ԿԸՅ – Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ԸՄԴԱ – Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն

ԸԸՅ – Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

ԺՅՄԻԳ – Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ՅՅ – Յայաստանի Յանրապետություն

ՄԸՅ – Մարզային ընտրական հանձնաժողով

ՏԸՅ – Տեղամասային ընտրական հանձնաժողով

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում նախագահական առաջին ընտրությունները տեղի են ունեցել 1991թ.-ի հոկտեմբերին՝ հաջորդելով 1991թ.-ի սեպտեմբերին կայացած Անկախության հանրաքվեին: Այդ պահից ի վեր Հայաստանում անցկացվել են մի շարք խորհրդարանական, նախագահական, տեղական ինքնակառավարման ընտրություններ և հանրաքվեներ:

Անցած 25 տարիների ընթացքում պարբերաբար փոփոխվել է Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացները կարգավորող օրենսդրությունը: 2016թ. մայիսի 25-ին ՀՀ ազգային ժողովը երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց ՀՀ ընտրական նոր՝ թվով երրորդ օրենսգիրքը, որի ընթացակարգերը բխում են 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի արդյունքում ընդունված սահմանադրական փոփոխություններից: Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո շարունակվել է փոփոխությունների շուրջ բանակցությունները տեղական և միջազգային շահագրգիռ կողմերի միջև, որի արդյունքում 2016թ. հունիսի 30-ին ընդունվել է ՀՀ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների երկու փաթեթ, որոնցից մեկն ուժի մեջ է մտել 2016թ. հուլիսի 30-ին: ՀՀ ԿԸՀ-ի կողմից որպես մյուս փաթեթի ուժի մեջ չմտնելու պատճառ ներկայացվել է այն, որ որևէ կազմակերպություն չի համաձայնել նախատեսված ժամկետում տրամադրել անհրաժեշտ տեխնիկական աջակցություն, թեև, ի սկզբանե, այդ փաթեթի ուժի մեջ մտնելը կապվում էր ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորության հետ:

Իշխանության և ընդդիմության միջև բանակցությունների շարունակման արդյունքում 2016թ. հոկտեմբերի 20-ին ընդունվել և 2016թ. նոյեմբերի 14-ին ուժի մեջ է մտել ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նոր օրենք, որով նախատեսված հիմնական փոփոխությունը ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակումն էր:

Հարկ է նշել, որ Ընտրական օրենսգրքի շուրջ «4+4+4» ձևաչափով բանակցություններին ի սկզբանե մասնակցել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, սակայն համաձայնությունները ձեռք են բերվել և ստորագրվել են միայն իշխանության և ընդդիմության միջև, քանի որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բանակցությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունենալու հնարավորություն չեն ունեցել:¹

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) կարևորագույն դեր են ունեցել ընտրական բարեփոխումների խթանման գործում, հատկապես ընտրական օրենսդրության վերանայման առումով: 2015 թ. Յեյթիևսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն իրականացրել է ամբողջական վերլուծություն (Յեյթիևսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՅԿ, 2015)՝ գնահատելով 2003-2013 թթ. Միջազգային դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված հանձնարարականների իրականացումը օրենսդրական և իրավակիրառ մակարդակներում:

Սույն հետազոտության նպատակն է, վերանայելով Յեյթիևսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վերոհիշյալ վերլուծությունը, ուսումնասիրել 2003թ.-ից ի վեր ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների, մասնավորապես ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, ԵԽԽՎ և այլ կառույցների հանձնարարականներն ու դիտարկումները և դրանց արտացոլումը ընտրական օրենսգրքում, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերյալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) մեկնաբանությունների և առաջարկությունների արտացոլումը Օրենսգրքի լրամշակման գործընթացում՝ վերլուծելով նրանց դերը ընտրական բարեփոխումներում:

¹ Հայտարարություն ընտրական օրենսգրքի և դրա շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ, <http://transparency.am/hy/news/view/1600>

Գլուխ 1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրություն

Անկախության 25 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունն անց է կացրել 6 նախագահական, 5 խորհրդարանական ընտրություններ, 4 հանրաքվե, ինչպես նաև բազմաթիվ տեղական ինքնակառավարման և լրացուցիչ ընտրություններ: Այդ ընթացքում ընտրական գործընթացների օրենսդրական կարգավորումներն անընդհատ փոփոխությունների են ենթարկվել. 1999թ. ընդունվել է առաջին համապարփակ ընտրական օրենսգիրքը, որին փոխարինել է 2011 թ. ընդունված երկրորդ ընտրական օրենսգիրքը, որին փոխարինեց ՀՀ սահմանադրության փոփոխությունների համաձայն 2016 թ. հունիսի 1-ին ուժի մեջ մտած երրորդ ընտրական օրենսգիրքը:

Մինչև 1999թ. ՀՀ Ընտրական օրենսգրքի ընդունումը ընտրությունները կարգավորվել են առանձին օրենքներով:

Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին ՀՀ օրենք, 1991թ.

Անկախ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահական ընտրությունները կայացել են 1991թ.-ի հոկտեմբերի 16-ին: Առաջին նախագահական ընտրությունները տեղի են ունեցել համաձայն 1991թ. Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին ՀՀ օրենքի:² Օրենքը բաղկացած էր 24 հոդվածներից, որոնք կարգավորում էին նախագահի ընտրության հիմունքները, ընտրական իրավունքը, հանձնաժողովների կողմից ընտրության կազմակերպումը, ընտրության նախապատրաստման և անցկացման հրապարակայնությունը, թեկնածուների գրանցումը, նյութական ռեսուրսների ապահովումը, ընտրախախտումների համար պատասխանատվությունը, ընտրության ժամկետները,

²ՕՐԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Օրենքն ուժը կորցրել է 30.04.96 ՅՕ-58), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76759>

վստահված անձանց գործունեությունը, ընտրացուցակները, քվեաթերթիկների կարգավորումները, հաշվարկի ընթացակարգերը և արդյունքների հրապարակումը: Համաձայն այդ օրենքի՝ ընտրությունների վարչարարությունը գործող հանձնաժողովների կողմից իրականացվում էր երեք մակարդակներում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, շրջանային կամ քաղաքային հանձնաժողով և տեղամասային հանձնաժողով: Հանձնաժողովներից և ոչ մեկը չէր գործում մշտական հիմունքներով: Օրենքը չէր նախատեսում դիտորդական առաքելության իրականացում: Չնայած օրենքը նախատեսում էր թեկնածուների 10 տարվա բնակություն, այն չէր պահանջում որևէ ապացուցող փաստաթղթի տրամադրում թեկնածուների գրանցման համար: Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր թեկնածու կարող էր գրանցել առավելագույնը 50 վստահված անձ, ովքեր պետք է գրանցված լինեին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Օրենքը չէր սահմանում նախընտրական քարոզարշավները և դրանց ֆինանսավորումը կարգավորող դրույթներ, սակայն ԿԸՀ-ից պահանջում էր սեփական միջոցներով թեկնածուի վերաբերյալ ընտրողներին տեղեկատվություն տրամադրել: Քվեարկության ընթացակարգը պահանջում էր, որ ընտրողներն իրենց ընտրության իրավունքը հաստատող վկայական ունենան:

Քվեաթերթիկի վրա յուրաքանչյուր թեկնածուի անվան դիմաց գրված էր «համաձայն եմ» բառակապակցությունը (եթե թեկնածուն մեկն էր, նաև «համաձայն չեմ» բառակապակցությունը), և քվեարկողներից պահանջվում էր ջնջել այն թեկնածուի անունը, ում չէին ընտրում և թողնել միայն նախընտրած թեկնածուի անունը: Հաղթող էր համարվում այն թեկնածուն, ով ամենաշատ ձայն էր ստանում, կամ ում օգտին քվեարկած ձայներն ավելի շատ էին, քան դեմ քվեարկած ձայները: Օրենքը չէր հստակեցնում թեկնածուի համար տրվող ձայների նվազագույն շեմ, միևնույն ժամանակ, ընտրությունները կունենային երկրորդ փուլ, եթե թեկնածուներից ոչ մեկը «բավարար» ձայն չհավաքեր:

Չնայած առաջին նախագահական ընտրությունները

կարգավորող օրենքի անհատակություններին՝ այս ընտրությունները ավանդաբար համարվում են միակ արդար ընտրությունները Հայաստանի Հանրապետության պատմության մեջ:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենք, 1995 թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջին ընտրությունները տեղի ունեցան 1995թ.-ի հուլիսի 5-ին՝ ՀՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեին զուգահեռ: Ընտրությունները կարգավորվում էին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենքով, որն ընդունվել էր 1995թ.-ի ապրիլին:³ ՀՀ Ազգային ժողովը կազմված էր 190 պատգամավորներից, որոնցից 150-ն ընտրվել էին մեծամասնական կարգով, իսկ 40-ը՝ համամասնական: Նոր օրենքը ընտրական իրավունք էր սահմանում մինչև ընտրությունների օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր մինչև ընտրությունների օրը առնվազն մեկ տարի բնակվել էին Հայաստանի Հանրապետությունում: Ընտրության իրավունք չէր տրվում հոգեկան հիվանդության պատճառով անգործունակ ճանաչված քաղաքացիներին, դատապարտյալներին, քրեական հանցագործության համար հետախուզվողներին, ինչպես նաև կալանքի տակ գտնվող այն անձանց, ում քվեարկության իրավունքը չէր հաստատվել գերագույն դատարանի կամ ԿԸՀ-ի կողմից: Մինևույն ժամանակ կալանավորները կարող էին գրանցվել որպես թեկնածու և իրենց իրավունքները կարող էին ներկայացնել վստահված անձանց միջոցով:

Օրենքը նախատեսում էր քարոզարշավի համար անձնական կամ նվիրաբերված գումարների օգտագործում, սակայն օրենքը ԿԸՀ-ից պահանջում էր ընտրողներին տրամադրել հիմնական տեղեկատվություն թեկնածուների և նրանց նախընտրական

³ ՕՐԵՆԵՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Օրենքն ուժը կորցրել է 05.02.99 ՅՕ-284), <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=44936>

ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև բոլոր թեկնածուների և կուսակցությունների համար հավասարաչափ անվճար եթերաժամ ապահովել՝ օգտագործելով ԿԸՀ-ի տնօրինության ներքո գտնվող միասնական ընտրական հիմնադրամի միջոցները: Օրենքը չէր սահմանում, թե ինչպես և որտեղ պետք է հավաքվեին և օգտագործվեին անհատական նվիրատվությունները, սակայն այն սահմանում էր թույլատրելի առավելագույն գումար և պարտադրում էր, որ թեկնածուները հայտարարագրեին իրենց ծախսերը:

Օրենքը գրանցված դիտորդներին թույլ էր տալիս դիտորդական առաքելություն իրականացնել ընտրության ընթացքում, բայց չէր հստակեցնում դիտորդների գրանցման պահանջներն ու գործընթացը: ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ Օրենքը ընտրական հանձնաժողովներում հավասար ներկայացուցչություն էր սահմանում մրցակցող բոլոր կուսակցությունների համար: Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների բոլոր որոշումները կարող էին բողոքարկվել ԿԸՀ-ին՝ թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների կամ քաղաքացիների կողմից՝ երեք օրվա ընթացքում:

ԿԸՀ-ի որոշումները կարող էին բողոքարկվել դատարանում թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և քաղաքացիների կողմից՝ եռօրյա ժամանակահատվածում: Թեկնածուն պարտավոր էր գրանցման համար վճարել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով ընտրական գրավ և ներկայացնել առնվազն 10000 ստորագրություն:

Հանրապետության նախագահի ընտրության մասին ՀՀ օրենք, 1996թ.

Երկրորդ նախագահական ընտրություններն անցկացվեցին 1996թ.-ի սեպտեմբերի 22-ին: Ընտրությունները կարգավորվում էին 1996թ.-ի ապրիլին ընդունված Հանրապետության նախագահի ընտրության մասին ՀՀ օրենքով:⁴ Նոր օրենքն ուներ 49 հոդված,

⁴ՕՐԵՆՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(Օրենքն ուժը կորցրել է
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=44938>

որոնք մանրամասն նկարագրում էին ընտրական գործընթացները: Ավելին, ընտրական համակարգի վերաբերյալ դրույթները հստակեցնում էին նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման հնարավորությունների ստեղծման և օգտագործման ընթացքը, նաև այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ ստորագրությունների ստուգումը, թեկնածուի գրանցման չեղարկումը, նախընտրական քարոզարշավը, ընտրացուցակների հրապարակումը և ստուգումը, ընտրական հանձնաժողովի կողմից փաստաթղթերի հանձնումը, համայնքային ընտրական հանձնաժողովների կողմից կտրոնների հաշվարկը, մարզային ընտրական հանձնաժողովների կողմից արդյունքների ամփոփումը, ԿԸՅ որոշման հրապարակումը, հերթական կամ արտահերթ նախագահական ընտրությունների կազմակերպումը: Նոր օրենքը նախատեսում էր նախագահական ընտրությունների կազմակերպում 4 մակարդակներում գործող ընտրական հանձնաժողովների կողմից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, մարզային ընտրական հանձնաժողով, համայնքային ընտրական հանձնաժողով և տեղամասային ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված էր 20 անդամից, որոնք նշանակվում էին Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների կողմից: Օրենքը ՀՀ քաղաքացիներին թույլ էր տալիս քվեարկել Հայաստանի՝ արտասահմանում գտնվող դիվանագիտական առաքելություններում: Ի դեպ, միջազգային դիտորդական առաքելությունները և տեղական կազմակերպությունները բազմիցս առաջարկել են, որ սույն դրույթը վերականգնվի: Մինևսույն ժամանակ, օրենքը կալանավորներին զրկում էր քվեարկելու կամ թեկնածություն ղնելու հնարավորությունից: Այսպիսով, իր թեկնածությունն առաջադրել ցանկացող կալանավորը պետք է դիմեր ԿԸՅ-ին, որն էլ իր հերթին պետք է դիմեր Գերագույն դատարան՝ վերանայելու խափանման միջոցը:

Սույն օրենքով սահմանվում էր, որ նախագահի թեկնածուները նախընտրական քարոզչության համար կարող են օգտագործել

անձնական և նախընտրական հիմնադրամում առկա միջոցները: Նախընտրական հիմնադրամ ստեղծելու դեպքում օրենքը սահմանում էր ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից նվիրաբերվող առավելագույն գումարի չափը, սակայն չէր սահմանափակում նախընտրական ծախսերի առավելագույն չափը: Օրենքը տեղական դիտորդական առաքելությունն չէր նախատեսում, սակայն միջազգային դիտորդերին թույլ էր տալիս մասնակցել բոլոր հանձնաժողովների հանդիպումներին և հետևել ընտրական գործընթացներին, ինչպես նաև թույլ էր տալիս ստանալ արձանագրությունների պատճենները: Քաղաքացիական նախաձեռնությունների և քաղաքական կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման համար պահանջվում էր քաղաքացիների 1000 ստորագրության ներկայացում: Թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ էր ներկայացնել առնվազն 25 000 ստորագրություն, ինչպես նաև 2 միլիոն ՀՀ դրամի չափով (4960 ԱՄՆ դոլար) ընտրական գրավ: Ըստ Հայաստանի Հարապետության ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝ այդ ժամանակ միջին աշխատավարձը 9469 ՀՀ դրամ (23 ԱՄՆ դոլար)⁵ էր:

Օրենքը չէր սահմանում վստահված անձանց ընդհանուր թիվը, միևնույն ժամանակ յուրաքանչյուր հանձնաժողովում նրանց թիվը սահմանափակվում էր մինչև երկու ներկայացուցիչ, որոնցից միայն մեկը կարող էր ներկա լինել հանձնաժողովի նիստին: Վստահված անձինք նաև իրավունք ունեին վավերականացման համար ստորագրել քվեաթերթիկի հետևում: Օրենքն արգելում էր ընտրողների շրջանում փողի կամ այլ ապրանքների բաժանումը և սահմանում էր թեկնածուի գրանցման չեղարկման ընթացքը, եթե մեղադրանքները հաստատվեին Գերագույն դատարանի կողմից:

Քվեարկության գործընթացը նախատեսում էր, որպեսզի քաղաքացին ստորագրեր քվեարկության թերթիկից հեշտությամբ առանձնացվող կտրոնը, որը ներառում էր ընտրացուցակում ընտրողի համարը և հաշվվում էր համայնքային ընտրական հանձնաժողովի

⁵ Աշխատավարձ, աշխատուժի գին, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, http://www.armstat.am/file/article/trud_09_5.pdf

կողմից՝ վավերացման համար: Քվեարկության ձևը եականորեն պարզեցված էր, և ընտրողները թեկնածուների անունները ջնջելու փոխարեն նշում էին կատարում իրենց նախընտրած թեկնածուի անվան դիմաց: Ըստ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի եզրակացության՝ այս օրենքը բարելավվել էր նախկինի համեմատությամբ, ներառում էր դրույթներ, որոնք նպաստում էին թափանցիկության բարձրացմանը՝ ընդգծելով, որ ամեն դեպքում դրանց իրականացումը և ոչ թե միայն ամրագրումն է եական: (OSCE/ODIHR, 1996)

1998թ.-ի արտահերթ նախագահական ընտրությունները նույնպես կարգավորվում էին 1996թ.-ի «Հանրապետության նախագահի ընտրության մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքը նախատեսում էր, որ նախագահի թեկնածու կարող էին լինել այն անձինք, ովքեր առնվազն 35 տարեկան էին, ՀՀ քաղաքացի էին եղել վերջին տաս տարվա ընթացքում և այդ ժամանակահատվածում մշտապես բնակվել էին Հայաստանի Հանրապետությունում: Մինչև 1997թ.-ի մարտը ՀՀ գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը Լեռնային Ղարաբաղի նախագահն էր, որից հետո նշանակվել էր ՀՀ վարչապետի պաշտոնում: Սա նշանակում է, որ ըստ օրենսդրության, նա իրավունք չունեի առաջադրելու իր թեկնածությունը: Սակայն, նրա գրանցումը հաստատվեց, և ԿԸՀ-ն որևէ քայլ չձեռնարկեց ներկայացված փաստաթղթերի վավերականությունը ստուգելու ուղղությամբ:

Այս ընտրությունների ժամանակ արձանագրվեցին մեծ թվով խախտումներ, որոնց մասին բարձրաձայնել է նաև ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդական առաքելությունը՝ ընդգծելով, որ թեև այս ընտրությունները 1995 և 1996թթ. ընտրությունների համեմատությամբ բարելավվել էին, այնուամենայնիվ չէին համապատասխանում ԵԱՀԿ չափանիշներին:

ՀՀ Ընտրական օրենսգիրք, 1999թ.

Երկրորդ գումարման Ազգային ժողովն ընտրվեց 1999թ.-ի մայիսի 30-ին՝ նոր ընդունված Ընտրական օրենսգրքին համապատասխան (131 պատգամավոր, 75-ը մեծամասնական և 56-ը համամասնական ընտրակարգով): 1999թ.-ի փետրվարին ընդունված Ընտրական

օրենսգիրքը համապարփակ փաստաթուղթ էր, որը կարգավորում էր խորհրդարանական, նախագահական և տեղական ինքնակառավարման ընտրությունները: 1999թ.-ի խորհրդարանական ընտրությունների մասին վերջնական գեկույցում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը մի շարք մտահոգություններ է ներկայացրել ընտրական օրենսգրքի մի քանի դրույթների՝ բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների կազմի, հանձնաժողովի անդամների կարգավիճակի, հանձնաժողովների աշխատանքի շարունակականության և Կենտրոնական և Մարզային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական անձնակազմի նշանակման, մի շարք ընտրական գործընթացներում թափանցիկության պակասի, ընտրության ընթացքում հանձնաժողովի աշխատանքային տարածքում կողմնակի անձանց ներկայության, զինվորական անձնակազմի գրանցման և քվեարկության, ընտրական գործընթացների բարդության, բողոքների ներկայացման և վեճերի լուծման դրույթների անորոշության, ինչպես նաև օրենքով սահմանված ընթացակարգի ոչ պատշաճ պաշտպանության վերաբերյալ: (OSCE/ODIHR, 1999): Ինչ վերաբերում է ընտրությունների փաստացի կազմակերպմանը, Առաքելությունը ևս մեկ անգամ արձանագրել է, որ թեև Հայաստանում 1999թ.-ի ընտրությունները ավելի բարելավված էին 1995թ., 1996թ. և 1998թ.-ի ընտրությունների համեմատ, սակայն նախորդ ընտրությունները համեմատության պատշաճ չափման միավոր չէին իրական բարելավում արձանագրելու համար: Հարկ է նշել, որ միջազգային առաքելությունների կողմից բացահայտված խնդիրների հիմնական մասը շարունակվել են բոլոր հաջորդ ընտրությունների ընթացքում:

Ընտրական առաջին օրենսգիրքը սահմանում էր ընտրությունների եռաստիճան կառավարման համակարգ՝ բաղկացած Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), Երևանում և տասը մարզերում գործող Մարզային ընտրական հանձնաժողովներից (ՄԸՀ) և Տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): Նոր օրենսգիրքը ԿԸՀ-ի և ՄԸՀ-ի ձևավորման այլ մեխանիզմ էր սահմանում. երեք անդամ նշանակվում

Եր կառավարության կողմից, գործող կամ արձակված Ազգային ժողովում պատգամավորական խմբակցությունն ունեցող և իրենց առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկներում առնվազն 30 հազար վավեր ստորագրություն ներկայացրած կուսակցությունները նշանակում էին մեկական անդամ, գործող կամ արձակված Ազգային ժողովում պատգամավորական խմբակցությունն չունեցող, բայց իրենց առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկներում առնվազն 30 հազարից առավել վավեր ստորագրություններ ներկայացրած առաջին 5 կուսակցությունները նշանակում էին մեկական անդամ: Վենետիկի հանձնաժողովը գտնում էր, որ ԿԸՀ-ի նկատմամբ վերահսկում չպետք է լինի քաղաքական կուսակցությունների կամ գործադիր իշխանության կողմից:

2003թ.-ի նախագահական ընտրությունները Չայաստանում անցան երկու փուլով, համաձայն 1999թ. ընդունված ընտրական օրենսգրքի՝ փետրվարի 19-ին և մարտի 5-ին: Ընտրական օրենսգրքում կատարվել էին մի շարք փոփոխություններ, որոնք ըստ միջազգային դիտորդական առաքելությունների, կարող էին բավարար հիմք հանդիսանալ պատշաճ ընտրությունների համար, եթե լինեք քաղաքական կամք: (OSCE/ODIHR, 2003)

Ընտրական օրենսգիրքը արտացոլում էր ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացված որոշ հանձնարարականներ: Ըստ փոփոխությունների, 11 մարզային ընտրական հանձնաժողովները փոխարինվել էին 56 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներով, որոնք պիտի ապահովեին ընտրությունների ավելի արդյունավետ կազմակերպումը: Այդուհանդերձ, տեղական և միջազգային դիտորդական առաքելությունն իրականացնող կազմակերպությունների մեծամասնությունն ընտրություններն ընդհանուր առմամբ ոչ բավարար գնահատեց, իսկ հետընտրական ցույցերը միայն հաստատեցին հանրային անվստահության փաստը:

Չայաստանի Չանրապետության երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները (131 պատգամավոր՝ 75 համամասնական

և 56 մեծամասնական կարգով) տեղի ունեցան 2003թ.-ի մայիսի 25-ին: Ըստ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի դիտորդական առաքելության տված գնահատականի՝ խորհրդարանական ընտրությունները 2003թ.-ի նախագահական ընտրությունների համեմատ բարելավվել էին, սակայն ձայների հաշվարկի և ամփոփման մասին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կարծիքը դրական չէր: Ընտրախախտումներ կատարողները պատասխանատվության չէին ենթարկվել, ինչն էլ ավելի խորացրեց անպատժելիության մթնոլորտը: Ինչպես բոլոր նախկին ընտրությունների ժամանակ, կանանց ներկայացվածությունը որպես թեկնածու և քաղաքական կուսակցության ներկայացուցիչ խիստ սահմանափակ էր: Ընդհանուր հետևողականության, թափանցիկության և պրոֆեսիոնալիզմի բացակայության պատճառով ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը ընտրությունների անցկացումը գնահատեց ոչ արդյունավետ: (ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2003)

ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման ընտրությունները կայացան 2007թ.-ի մայիսին: Պատգամավորների ընդհանուր թվի պահպանմամբ փոխվել էր համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրված պատգամավորների համամասնությունը՝ 90 համամասնական և 41 մեծամասնական: Առաջին անգամ ոստիկանության վերահսկողության ներքո սկսեց գործել համակարգչային կենտրոնացված ընտրացուցակ:

«Ընտրական օրենսգիրքը, որը 2003 թ. խորհրդարանական ընտրություններից ի վեր զգալիորեն փոփոխվել և կատարելագործվել է, ամուր հիմքեր ապահովեց ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար՝ չնայած որ դեռ թերություններ կան: Դրանք հիմնականում կապված են սահմանված ժամկետից շուտ և անուղղակի նախընտրական քարոզչության իրականացման մասին հստակ դրույթների բացակայության և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման իրավական կարգավորման հետ, որն ընտրությունների մասնակիցներին հնարավորություն է տալիս

գերազանցել քարոզարշավի ֆինանսավորման առկա սահմանափակումները: Բացի այդ, բողոքների և բողոքարկման գործընթացում ի հայտ եկան իրավական դաշտի ներքին հակասությունները: Ընտրակաշառք բաժանելու հնարավոր դեպքերի նկատմամբ չկիրարկվեցին պատժամիջոցներ, և հրապարակայնորեն հնչեցված մտահոգությունների կապակցությամբ ընդհանուր առմամբ քայլեր չձեռնարկվեցին՝ պաշտոնապես բողոքներ չներկայացվելու պարագայում» (ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ, 2007)

Ընդունելով, որ փոփոխված ընտրական օրենսգիրքը ապահովում էր ժողովրդավարական ընտրությունների հիմքը՝ ԸՄԴԱ-ներն այնուամենայնիվ նշել են, որ այդ օրենսգիրքը հստակ չի տարանջատում կուսակցական գործունեությունն ու քարոզարշավային գործողությունը, հավուր պատշաճի չի կարգավորում քարոզարշավի ֆոնդահայթայթումը և չի անդրադառնում դիմումների և բողոքների ընթացակարգում առկա հակասություններին: Փոփոխությունները նաև բացառում էին երկրից դուրս քվեարկության հնարավորությունը և երկքաղաքացիություն ունեցող անձանց քվեարկության հնարավորությունը: Ընտրական հանձնաժողովի անդամների նշանակման կարգը ևս փոփոխված էր. ԿԸՅ-ն յուրաքանչյուր ԸԸՅ-ի համար առաջադրում էր մեկ անդամ, որն իր հերթին մեկական անդամ էր առաջադրում յուրաքանչյուր ՏԸՅ-ի համար, որը գործում էր նույն ԸԸՅ-ի ենթակայության ներքո: Փոփոխված Ընտրական օրենսգիրքը սահմանում էր, որ ԿԸՅ մեկ անդամ պետք է առաջադրվի ՅՅ նախագահի կողմից, մեկ անդամ՝ յուրաքանչյուր խորհրդարանական խմբակցության կողմից, մեկ անդամ՝ ժողովրդական պատգամավոր խորհրդարանական խմբի և մեկ անդամ՝ դատական մարմինների կողմից:

Տեղական և միջազգային դիտորդներն արձանագրել են ընտրակաշառքի բազմաթիվ դեպքեր, սակայն նման պնդումները դժվար էր ապացուցել, քանի որ Քրեական օրենսգիրքը

պատասխանատվությունն էր նախատեսում կաշառք վերցնելու, այլ ոչ թե տալու համար, ինչը նշանակում էր, որ կաշառք վերցնող ընտրողներն իրենք կարող էին պատասխանատվության ենթարկվել և այդ իսկ պատճառով նման տեղեկատվությունն չէին տրամադրի:

2008թ.-ի նախագահական ընտրությունները Հայաստանում կայացան փետրվարի 19-ին: 2008թ.-ի ընտրությունների դիտորդությունն իրականացվեց ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, ԵԱՀԿ ԽԱ-ի, ԵԽՏԿ-ի և Եվրոպական Խորհրդարանի համատեղ ջանքերով: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ն իր գեկուլյցում նշել է, որ ընտրությունների ընթացքում տեղի ունեցան այնպիսի թերություններ, որոնք արժեզրկեցին ընտրական ողջ գործընթացը: (ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2008)

Ըստ միջազգային դիտորդների՝ 2008թ.-ի ընտրական գործընթացների թերությունները պայմանավորված էին իրավական դրույթների արդյունավետ իրականացման քաղաքական կամքի բացակայությամբ, թեև իրավական դաշտը ընտրական իրավունքի, քարոզարշավի իրականացման և բողոքների ընթացակարգերի առումով նույնպես բարելավման կարիք ուներ:⁶

ՀՀ Ընտրական օրենսգիրք, 2011թ.

2012թ.-ի մայիսին կայացան ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները (131 պատգամավոր՝ 90 համամասնական և 41 մեծամասնական ընտրական համակարգով):

Ընտրությունները կայացան 2011թ.-ի նոր Ընտրական օրենսգրքի համաձայն, որը բավականանին բարելավված էր նախկին օրենսգրքի համեմատ, սակայն այն չէր ապահովում թեկնածուների նախընտրական քարոզչության հավասարությունը և ընտրողների պաշտպանությունը ճնշումներից: Օրենսգիրքը բոլոր դիտորդներին պարտադրում է հանձնել համապատասխան ստուգարք՝ որակավորման վկայական ստանալու համար:

Ըստ 2011թ. Ընտրական օրենսգրքի, ԿԸՀ-ի անդամները նշանակվում են նախագահի կողմից՝ երեքը Մարդու իրավունքների

⁶ Աշխատավարձ, աշխատուժի գին, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, http://www.armstat.am/file/article/trud_09_5.pdf

պաշտպանի, երկուսը Փաստաբանների պալատի նախագահի, և երկուսը Վճռաբեկ դատարանի նախագահի առաջադրմամբ: ԸԸՅ-ները մշտապես գործող մարմիններ են, որոնց անդամները նշանակվում են ԿԸՅ-ի կողմից այն քաղաքացիների թվից, ովքեր դիմում են անդամության համար: ՏԸՅ-ները ժամանակավոր մարմիններ են, որոնք կազմված են համապատասխան ԸԸՅ-ի կողմից նշանակված 2 անդամներից և ՀՀ Ազգային ժողովում ներկայացված յուրաքանչյուր կուսակցությունից նշանակվող 5 անդամներից: Ըստ նոր օրենսգրքի՝ ՏԸՅ-ի անդամները պարտավոր են հանձնել ԿԸՅ-ի կողմից անցկացվող ստուգարքը և ստանալ ԿԸՅ-ի որակավորման վկայական:

Ըստ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի դիտարկման.

«Նոր Ընտրական օրենսգրքի դրական հատկանիշներից է այն պահանջը, որ ընտրական հաճնաժողովների կողմից բողոքների քննարկման ժամանակ պետք է իրականացվի պատշաճ վարչական վարույթ: Ինչևէ, Ընտրական օրենսգիրքն անհիմն սահմանափակում է բողոք ներկայացնելու նրանց իրավունքը, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են, ըստ էության, մերժելով ընտրողի՝ հիմնական ընտրական իրավունքների խախտման համար դատական պաշտպանություն ստանալու իրավունքը: Ի լրումն, ընտրական իրավունքների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն՝ էլ ավելի սահմանափակելով արդյունավետ իրավական փոխհատուցում ստանալու հնարավորությունը: Ավելին, դիմումների և բողոքների վերաբերյալ իրավական դաշտը անհիմն խրթին է»: (ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2012)

Մի շարք տեղական դիտորդներ արձանագրել են, որ վարչական ռեսուրսների համատարած չարաչափումները, իշխող Հանրապետական կուսակցության նախընտրական հավաքներին պետական աջխատողների հարկադիր մասնակցությունը, ընտրողների նկատմամբ ճնշումները, մի քանի կուսակցությունների

կողմից ընտրակաշառքների տրամադրումը՝ ներառյալ «բնամթերքով» աջակցությունն ու բարեգործական գործողությունները, հիմք էին 2012թ.-ի խորհրդարանական ընտրությունները ոչ արդար և ոչ ժողովրդավար համարելու համար: Այս ընտրությունների ընթացքում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի բազմաթիվ դիտորդներ նույնպես բարձրացրեցին ընտրակաշառքի՝ որպես տարածված հիմնախնդիր: Մյուս մեծ խնդիրը բողոքների անարդյունավետ քննությունն էր:

Վերջին նախագահական ընտրությունները կայացան 2013թ.-ի փետրվարի 18-ին: 2013թ.-ի նախագահական ընտրությունները նույնպես կարգավորվեցին 2011թ. ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքով: Այս ընտրությունները նույնպես չհամապատասխանեցին ժողովրդավարական չափանիշներին, քանի որ դրանք աչքի ընկան իրական մրցակցության պակասով, քարոզարշավի ողջ ընթացքում վարչական ռեսուրսների լայնածավալ օգտագործմամբ, ձայների հաշվարկի ընթացքում Էական խախտումներով, և այլ բացասական գործոններով, որոնք հանգեցրեցին Հայաստանի Հանրապետության ընտրողների ցածր վստահությանը ընտրությունների պաշտոնական արդյունքների նկատմամբ:

Ընտրական օրենսդրությունում վերջին տարիներին կատարված փոփոխությունները նշանակալիորեն բարելավեցին ընտրությունների վարչարարության որակը, սակայն զուգահեռաբար օրենքի շրջանցման ավելի հղկված մեթոդներ մշակվեցին:

2011 թ. ՀՀ ընտրական օրենսգրքի ընդունման փուլում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված որոշ առաջարկություններ հաշվի էին առնվել, սակայն որոշ հանձնարարականներ պատշաճ չէին ընդգրկվել, ներառյալ՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրելու իրավունքի հնարավորության սահմանումը, ընտրատեղամասերում ընտրողների թվի նվազեցումը, նվիրատվությունների թափանցիկության ապահովումը, ինչպես նաև ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների կողմից խախտումների վերաբերյալ իրավապահ մարմիններին տեղեկացնելու պարտավորության սահմանումը:

Ինչպես նաև պատշաճորեն հաշվի չէին առնվել հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի ավելի ներառական և բազմազան կազմ ապահովելու, լիցենզավորման գործընթացում տարբեր շահերի ներառման և ֆինանսավորման թափանցիկության առումով «Հեռուստատեսության և ռադիոյի» մասին օրենքի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները:

2012թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից տրված հանձնարարականները ընդհանրապես չէին իրականացվել, չնայած առաջարկվել էր դրանց անդրադառնալ մինչ 2013թ.-ի նախագահական ընտրությունները: Դրանք հիմնականում վերաբերում էին բողոքների և դիմումների արդյունավետ քննությանը, վարչական ռեսուրսների չարաշահման փաստերով քրեական հետապնդմանը, ընտրակաշառքի վերաբերյալ բողոքների ներկայացմանը և ընտրացուցակների ստուգմանը:

Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող քաղաքացիները օրենքով դեռևս զրկված էին ընտրությանը մասնակցելու հնարավորությունից, չնայած, որ հատուկ պայմաններ էին ստեղծվել սահմանափակ խմբի՝ Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների և Հայաստանում գրանցված կորպորացիաների արտասահմանյան մասնաճյուղերի աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար:

Տեղամասային կենտրոնների մեծ մասը հարմարեցված չէին անվասայլակների համար: Անկողնային հիվանդները և ծերերը, ովքեր անկարող էին հասնել ընտատեղամաս, զրկված էին իրենց սահմանադրական իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Խուլ և համր քաղաքացիների համար նախընտրական ծրագրերի և քարոզչական նյութերի թարգմանությունը նշանների լեզվով հասանելի չէր: Մի շարք ընտրատեղամասերում տեսողության խնդիր ունեցող մարդկանց չապահովեցին համապատասխան օպտիկական կադապարներով:

Միացյալ միջազգային դիտորդական առաքելության նախնական

հայտարարությամբ նախագահական ընտրությունները ընդհանուր առմամբ գնահատվեցին էին որպես լավ կազմակերպված և որ այդ ընտրություններին բնորոշ էր հիմնարար ազատությունների, ներառյալ հավաքների և արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանությունը: (ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2013)

Տեղական դիտորդները կարծում էին, որ համատարած ընտրակաշառքները, ընտրողների նկատմամբ ճնշումները, վարչական ռեսուրսների չարաշահումները, ինչպես նաև հաշվարկման կեղծումները, չէին կարող համարվել պատշաճ ընտրություն, և ԸՄԴԱ-ի հայտարարությունը խրախուսում էր ընտրակեղծիքների և ընտրախախտումների անպատժելիությունը, և տեղական դիտորդների նկատառումները պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեին: Կեղծված արդյունքների վերաբերյալ ընդհանուր դժգոհությունը արտահայտվեց զանգվածային ցույցերի և ընդվզումների միջոցով՝ երկրի ողջ տարածքով:

Չաշվի առնելով հետընտրական իրադարձությունները՝ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի վերջնական գեկույցը Էականորեն փոխեց ընտրական գործընթացների գնահատումը և ակնհայտորեն հաշվի էր առել տեղական դիտորդների դիտարկումները: (ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, 2013)

Գլուխ 2. ՀՀ ընտրական օրենսգիրք, 2016թ.

2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունը կիսանախագահական պետական կառավարման համակարգից անցավ խորհրդարանական պետական կառավարման համակարգին (համամասնական ընտրակարգով, նվազագույնը 101 պատգամավոր): Սահմանադրական փոփոխությունների բովանդակության և սահմանադրական փոփոխությունների ընդունման հանրաքվեի վերաբերյալ ներկայացվեցին բազմաթիվ մտահոգություններ,⁷ որոնք հիմնականում անտեսվեցին:

Խորհրդարանական համակարգի կարգավորումներում սահմանվեց «կայուն քաղաքական մեծամասնության» պահանջը (89-րդ հոդված), որը ենթադրում է, որ «Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը»: Կայուն մեծամասնության նման կարգավորմամբ սահմանադրական մակարդակում ամրագրվում է մեկ կուսակցության գերակայությունը՝ հնարավորություն տալով սեփական հայեցողությամբ ձևավորել գործադիր և դատական իշխանությունները: Ընտրական օրենսգրքով սահմանվեցին քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը, որոնք կներկայացվեն ստորև:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական կարգով: Մինևույն ժամանակ ՀՀ Ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանվում է 13 ընտրական տարածք, որոնցից 4-ը Երևան քաղաքում, իսկ 9-ը՝

⁷ Տե՛ս «ՁԵԿՈՒՅՑ Պարտադրված սահմանադրական փոփոխությունների ընդունման գործընթացի վերաբերյալ», ՀԲԱ Վանաձորի գրասենյակ, 2016, <http://hcav.am/wp-content/uploads/2016/01/Constitutional-Reform-2015.pdf>

մարզերում: Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը միավորված են մեկ ընտրական տարածքում:

Այսպիսով, Ազգային ժողովի ընտրություններում կուսակցություններն ու կուսակցությունների դաշինքները ներկայանում են մեկ համապետական և 13 տարածքային ընտրական ցուցակներով: Ընդ որում, քվեարկության համար ընտրողին տրվում է մեկական քվեաթերթիկ գրանցված յուրաքանչյուր կուսակցության/կուսակցությունների դաշինքի համար, որի առաջին էջում նշված է կուսակցության անունը և համապետական ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների անունները, իսկ երկրորդ էջում նշված է տարածքային ընտրական ցուցակը, որում թեկնածուների առավելագույն թիվը սահմանվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ելնելով տվյալ տարածքի բնակչության թվից: ⁸ Որևէ կուսակցության/կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկն ընտրելուց հետո ընտրողը հակառակ կողմում նշում է կատարում տարածքային ընտրական ցուցակի իր նախընտրած թեկնածուի դիմաց: Այսինքն տարածքային ընտրական ցուցակների սահմանմամբ ըստ եռթյան ներդրվում է 100%-անոց մեծամասնական համակարգ, քանի որ ընտրողները հիմնականում քվեարկելու են անհատների օգտին՝ անկախ կուսակցական պատկանելությունից, և այդ քվեն ըստ եռթյան ձևավորելու է կուսակցության ստացած մասնաբաժինը Ազգային ժողովում: Սահմանադրության փոփոխությունների 7-րդ հոդվածով սահմանվում են ընտրական իրավունքի սկզբունքները, ըստ որի՝ «Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»: Մինևույն ժամանակ սահմանադրության փոփոխություններով նախատեսվում է, որ համայնքի ղեկավարի ընտրությունները սահմանվում են ընտրական օրենսգրքով և կարող

⁸Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրություններին յուրաքանչյուր ընտրական տարածքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվը սահմանելու մասին ԿԸՀ որոշում http://res.elections.am/images/dec/16.156_A%20.pdf

են լինել ուղղակի կամ անուղղակի և այն դեպքում, երբ այդ ընտրություններն ուղղակի են, գործում է 7-րդ հոդվածի սկզբունքը: Ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ համայնքի ղեկավարի անուղղակի ընտրություններ անցկացվում են Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ ավագանու կուսակցական համամասնական ցուցակներով:

Սահմանադրության փոփոխությունների համաձայն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը հաստատում է ՀՀ Ազգային ժողովը: Նոր կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվեց 2016թ. հոկտեմբերի 6-ին: Ապացուցելով, որ ընտրական գործընթացների բարելավման վերաբերյալ պնդումները միայն հռչակագրային բնույթ ունեն՝ ՀՀ իշխանությունները վերահաստատեցին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը՝ այսպիսով բացառելով ընտրական վարչարարության իմաստալից փոփոխության որևէ հնարավորություն:

ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանվում են մի շարք փոփոխություններ. (ՀՀ Ընտրական օրենսգիրք, 2016)

Ընտրողների գրանցումը տեղամասում իրականացվում է տեխնիկական սարքավորման միջոցով, որում առկա է տվյալ տեղամասի ընտրողների ցուցակը՝ նրանց անձը հաստատող բոլոր փաստաթղթերի տվյալներով: Այսինքն անձը կարող է քվեարկության ներկայանալ նույնականացման քարտով, կենսաչափական անձնագրով, ոչ կենսաչափական անձնագրով կամ օրենքով սահմանված դեպքերում՝ ժամանակավոր փաստաթղթով: Տեղամասերում գտնվող Էլեկտրոնային սարքավորումները չեն պարունակում զինծառայող ընտրողների վերաբերյալ տվյալները, ավելին զորամասերում հաշվառված ընտրողների թվից բացի, այսուհետ գաղտնիք է համարվում նաև նրանց քվեարկության տեղամասի համարը և վայրը: (ԸՕ Հոդված 8.12) Այս դրույթները բավականին խնդրահարույց են բազմակի քվեարկությունների կանխարգելման տեսանկյունից:

Ընտրական գործընթացներում ներգրավված ընդդիմադիր կուսակցությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ընտրական նոր օրենսգրքի մշակման ընթացքում և դրանից առաջ՝ որպես հիմնական պահանջ նշում էին քվեարկությանը մասնակցած ընտրողների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը՝ բացակա անձանց փոխարեն քվեարկելը բացառելու նպատակով: Այս պահանջի վերաբերյալ միջազգային կառույցների նախնական բացասական վերաբերմունքը հետագայում փոխվեց՝ ընտրական գործընթացների նկատմամբ վստահության բարձրացման հրամայականով:

Քվեարկությանը մասնակցած անձանց տվյալների հրապարակման հետ կապված 2016թ. մայիսի 26-ին ընդունված ՀՀ Ընտրական օրենսգրքի Հոդված 68-ի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում էր.

3) եթե տեխնիկական սարքավորումը անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշվում է տեղամասի համարը, առանց ընտրատարածքի համարը նշելու, ինչպես նաև տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան տեղամասային կենտրոնի ընտրողների ցուցակում: Տեղեկանքի մեկական օրինակ ըստ պահանջի տրամադրվում է յուրաքանչյուր մասնակից կուսակցության մեկական վստահված անձի: Տեղեկանքի մեկ օրինակը ստանձվում է մաքուր թղթի վրա, որից հետո հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց հնարավորություն է ընձեռնվում լուսանկարահանել այն: Տեղեկանքը տեղադրվում է պարկում: Վերահաշվարկի ժամանակ սույն տեղեկանքը կրկին չի տպվում, սակայն այն լուսանկարահանելու իրավունքը պահպանվում է: Վստահված անձանց տրամադրվում է ընդհանուր 20 րոպե, որպեսզի նրանք

ընտրանքային կարգով համադրեն տեղեկանքի տվյալները քվեարկության մասնակցած ընտրողների ցուցակի հետ:

Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում նույն հոդվածը սահմանում էր, որ տվյալ տեղամասում ներկա վստահված անձինք քվեարկության հաջորդ օրը ժամը 14:00-18:00, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 9.30-ը, կարող էին դիմում ներկայացնել՝ քվեարկությանը մասնակցած անձանց ցուցակին ծանոթանալու համար: Ցուցակին ծանոթանալու համար տրամադրվում էր 2 ժամ՝ առանց պատճենահանելու, լուսանկարահանելու և տեսանկարահանելու հնարավորության:

2016թ. հուլիսի 30-ին ուժի մեջ մտած փոփոխություններով քվեարկության օրը ընտրողների ստորագրած ցուցակների ծանոթանալու համար վստահված անձանց տրվող ժամանակն ավելացվեց ևս 10 րոպե և տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում նրանց հնարավորություն տրվեց ցուցակներին ծանոթանալու դիմում ներկայացնել քվեարկության հաջորդ օրը ժամը 14:00-18:00, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ը:

Վերջին, 2016թ. նոյեմբերի 14-ին ուժի մեջ մտած փոփոխություններով նախատեսվեց ստորագրված ցուցակների սկանավորում և հրապարակում ԿԸՅ կայքում: (ԸՕ Յողված 73) Մինևույն ժամանակ ՀՀ Քրեական օրենսգրքով այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ դիտավորյալ կերպով սուտ հայատարարություն տալու համար նախատեսվեց 2-ից 5 տարի ազատազրկում, իսկ անփութությամբ նույն արարքի կատարման համար՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ

ագատագրկում՝ մինչև երկու տարի ժամկետով:

ՀՀ Ընտրական օրենսգրքով նշանակալիորեն սահմափակվում է ընտրական գործընթացների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հնարավորությունը: Օրենսգրքի 30-րդ հոդվածով սահմանվում է, որ դիտորդական առաքելությունն իրականացնելու իրավունք ունեն այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ընտրությունները նշանակելու օրվան նախորդող առնվազն մեկ տարում ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր: Դիտորդական կազմակերպությունները դիտորդներին հավատարմագրելու համար դիմումները ներկայացնում են քվեարկությունից 15 օր առաջ (2011թ. օրենսգիրքը սահմանում է 10 օր): Դիտորդական առաքելության իրավունքից զրկվել են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները: Նրանց համար սահմանվել է «այցելուի» կարգավիճակը:

Եթե 2011թ. օրենսգիրքը չէր սահմանափակում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների թիվը և չէր պահանջում նրանց հավատարմագրում, ապա սույն օրենսգիրքը սահմանում է, որ լրատվական գործունեություն իրականացնողը, որն առնվազն մեկ տարի իր անունից տարածում է որևէ լրատվության միջոց, կարող է քվեարկությունից 15 օր առաջ հավատարմագրել առավելագույնը 50 ներկայացուցչի և միայն մեկ լրատվության միջոցի անունից:

2011թ. օրենսգիրքը չի սահմանափակում տեղամասում տարբեր կառույցներից միաժամանակ գտնվող դիտորդների և ՉԼՍ ներկայացուցիչների թիվը, մինչդեռ Օրենսգիրքն ի սկզբանե սահմանում էր, որ կարող են ներկա գտնվել առավելագույնը 8 դիտորդ և ՉԼՍ ներկայացուցիչ, իսկ վերջին Օրենսգիրքը սահմանում է, որ տեղամասում հանձնաժողովի բնականոն աշխատանքի խոչընդոտման դեպքում հանձնաժողովի նախագահը կարող է հանձնաժողովի 2/3-ի ձայներով դուրս հրավիրել դիտորդներին կամ ՉԼՍ ներկայացուցիչներին, այն դեպքում, երբ նրանց թիվը 15-ից ավել

Է: Ի դեպ հանձնաժողովի քվեարկությամբ դիտորդներին կամ ՉԼՄ ներկայացուցիչներին տեղամասից հեռացնելու հնարավորության սահմանումը ինքնին մտահոգիչ է: 2011թ. ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ դիտորդը տեղամասից կարող է հեռացվել միայն ձերբակալվելու կամ կալանավորվելու դեպքում (Յոթերորդ 31.4):

Օրենսգիրքը նվազագույնի է հասցնում դիտորդների իրավունքները, միաժամանակ 2016թ. մայիսի 25-ին ընդունված Օրենսգրքում պահպանվեց ընտրական օրենսդրության վերաբերյալ ստուգարքի հանձնման պահանջը, սակայն ավելի ուշ ընդունված փոփոխություններով այն հանվեց:

Ընտրական վարչարարության իրականացման առումով Օրենսգիրքը սահմանում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ, որում ընտրատարածքային հանձնաժողովների փոխարեն ստեղծվում են առավելագույնը 41 տարածքային ընտրական հանձնաժողովներ, որոնց կոնկրետ թիվը սահմանվում է ԿԸՅ որոշմամբ: Տարածքային ընտրական հանձնաժողովները կատարում են միայն վարչարարական գործառույթ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում վերացվել է ավագանու անդամների ներգրավման արգելքը, թեև նույնիսկ արգելքի առկայության դեպքում նախորդ ընտրություններին և մասնավորապես սահմանադրական հանրաքվեի ժամանակ բացահայտվել էր, որ ավագանու բազմաթիվ անդամներ ներգրավված են տեղամասային ընտրական հանձնաժողովներում:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում Էլեկտրոնային քվեարկության իրավունքը Օրենսգրքով տարածվում է նաև արտերկրում ուսման մեջ գտնվող զինվորականների վրա, ինչն ավելի է խորացնում խտրական վերաբերմունքը ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հնարավորությունների

Նկատմամբ, քանի որ արտերկրում գտնվող մյուս քաղաքացիները քվեարկելու հնարավորություն չեն ունենում:

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է քվեարկության գործընթացի ամբողջական փոփոխություն: Գրանցվելով տեխնիկական սարքավորման միջոցով, ընտրողը ստանում է կտրոն, որը ներկայացնում է ընտրացուցակի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և ընտրացուցակում ստորագրելուց հետո ստանում է քվեաթերթիկները: Քվեախցիկում քվեարկելուց հետո ընտրողը մոտենում է քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին, որը քվեարկության կտրոնը ստուգելուց հետո ինքնաստուճվող դրոշմանիշ է փակցնում ծրարում գտնվող քվեաթերթիկի վրա, որից հետո ընտրողն այն գցում է քվեատուփի մեջ: Քվեարկության ծրարը չի կնքվում: ՀՀ ԱԺ ընտրությունների դեպքում ընտրողը ստանում է առանձին քվեաթերթիկ յուրաքանչյուր կուսակցության համար և քվեախցում առկա առանձին տուփի մեջ է գցում չօգտագործված քվեաթերթիկները: Համապատասխան կուսակցության քվեաթերթիկի երկրորդ էջում ընտրողը քվեարկում է այդ կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի օգտին:

Ընտրական օրենսգրքով վերանայվել է կուսակցությունների ընտրական ցուցակներում մեկ սեռի ներկայացվածության չափը: Օրենսգիրքը սահմանում է, որ կուսակցությունների/դաշինքների թե՛ համապետական, թե՛ տարածքային ընտրական ցուցակներում մեկ սեռի ներկայացուցիչների թիվը չի կարող գերազանցել 70%-ը: 2011թ. ՀՀ ընտրական օրենսգիրքը նախատեսում էր 80%: Ի տարբերություն 2011թ. Օրենսգրքի, նոր Օրենսգիրքը սահմանում է նաև երաշխիքներ քվեարկությունից հետո ՀՀ Ազգային ժողովում և Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքների ավագանիներում երկու սեռերի ներկայացվածության վերաբերյալ: Ըստ այդմ ընտրված թեկնածուի ինքնաբացարկի դեպքում մանդատը փոխանցվում է նույն սեռի հաջորդ թեկնածուին, եթե թեկնածուի ինքնաբացարկի արդյունքում մեկ սեռի ներկայացվածությունը կարող է նվազել 25%-ից: Մինչև 2022 թվականը սույն պահանջը ցուցակների նկատմամբ 25% է, իսկ

ընտրված խմբակցությունների նկատմամբ՝ 20%:

Ի կատարումն ՀՀ Ազգային ժողովում ազգային փոքրամասնությունների ներկայացվածության սահմանադրական պահանջի, նոր ընտրական օրենսգրքի համաձայն կուսակցությունների համապետական ընտրական ցուցակները պետք է ունենան երկրորդ մաս, որում պետք է ներառվեն նախորդ մարդահամարի տվյալներով չորս ամենամեծ ազգային փոքրամասնությունները ներկայացնող թեկնածուներ:

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներին ֆիզիկական անձանց կողմից կատարված մուծումների թույլատրելի գումարը հնգապատկվել է՝ հասնելով մինչև նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը: Նախընտրական քարոզչության ֆինանսավորման նպատակով կուսակցությունները կարող են ծախսել նվազագույն աշխատավարձի 500 000-ապատիկը չգերազանցող գումար, ինչը 2011թ. օրենսգրքով թույլատրելի գումարի հնգապատիկն է, թեև որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել նախընտրական հիմնադրամից ֆինանսավորվող ծախսերի ցանկում: Այդ գումարը կրկին չի ներառում նախընտրական քարոզչության ընթացքում կատարված վերադիր, տրանսպորտային և այլ կազմակերպական ծախսերը, այդ թվում նախընտրական շտաբերի վարձակալության և դրանցում ներգրավված ժամանակավոր աշխատակազմի վճարները, որոնք ըստ էության որևէ կերպ չեն արձանագրվում կամ հարկվում:

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ Օրենսգիրքը սահմանում է, որ քվեարկության արդյունքում Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին որոշումն ընդունվում է, եթե ընտրություններին մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) որևէ մեկը ստացել է առնվազն 51 մանդատ: Մանդատների բաշխման համար սահմանվել է բարդ համակարգ, որում հաշվի են առնվում կուսակցության ստացած ընդհանուր ձայները, տարածքի գործակիցը և ազգային

փոքրամասնություններին հատկացվելիք մանդատների թիվը: Եթե կուսակցություններից որևէ մեկը ստացել է 50%-ից ավել, բայց 54%-ից պակաս մանդատ, ապա նրան տրվում է այնքան լրացուցիչ մանդատ, որպեսզի արդյունքում ստացած մանդատների թիվը հավասար լինի ընդհանուր մանդատների թվի 54%-ին:

Եթե կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) որևէ մեկը ստանում է ձայների 2/3-ից ավելին, ապա մյուսները ստանում են այնքան լրացուցիչ մանդատ, որ արդյունքում նրանց ստացած մանդատների թիվը հավասար լինի մանդատների ընդհանուր թվի 1/3-ին:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն, ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նվազագույն շեմը հաղթահարած կուսակցությունը (5%) կամ կուսակցությունների դաշինքը (7%) կարող է քաղաքական կոալիցիա կազմել առավելագույնը երկու այլ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) հետ՝ մանդատների ընդհանուր թվի մեծամասնություն ստանալու համար: Եթե ձևավորված կոալիցիան ստացել է մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն այդ թիվը պակաս է 54% -ից, ապա կոալիցիան ստանում է այնքան լրացուցիչ մանդատ, որ արդյունքում ստացած մանդատների թիվը հավասար լինի մանդատների ընդհանուր թվի 54%-ին:

Կոալիցիայում առավելագույնը երեք կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) սահմանափակումը բացառում է ավելի քիչ ձայներ ստացած երեքից ավելի կուսակցությունների միավորումը մեկ կոալիցիայում և նրանց կողմից «կայուն քաղաքական մեծամասնության ձևավորման» հնարավորությունը:

Սահմանված վեցօրյա ժամկետում կոալիցիայի չձևավորման դեպքում անց է կացվում քվեարկության երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին փուլում առավելագույն ձայն ստացած երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց շուրջ կարող են նոր դաշինքներ ձևավորվել մինչև երկրորդ փուլի քվեարկությունը: Եթե առավելագույն ձայներ ստացած երկու կուսակցությունները կազմեն դաշինք, ապա երկրորդ փուլին

մասնակցելու իրավունք է ստանում առավելագույն ձայների ստացած երրորդ կուսակցությունը (դաշինքը):

Օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն, Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների դեպքում ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի միջև, որոնք ստացել են կողմ քվեարկած քվեարթերթիկների թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն 6%-ը և 8%-ը: Եթե ավագանու ընտրությանը մասնակցում են մինչև երեք կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատները բաշխվում են բոլորի միջև: Եթե կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) մեկը ստանում է ձայների 40%-ից ավելին, բայց ոչ բացարձակ մեծամասնությունը, ապա տեղերի բացարձակ մեծամասնությունը տրվում է այդ կուսակցությանը:

Գլուխ 3. Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների հանձնարարականների և միջազգային չափանիշների արտացոլումը նոր ընտրական օրենսգրքում

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները հաճախ շեշտում են, որ պատշաճ օրենսդրական կարգավորումները, թեև կարևոր, բայց բավարար չեն եզրակացնելու համար, որ ընտրությունները լավ կկազմակերպվեն: Անհրաժեշտ է ընդգծել այն, որ արդար և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու և ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու հարցում ամենաեական գործոնը իշխանությունների վճռականությունն է:

Այնուամենայնիվ ընտրական կարգավորումները և դրանց մշակման փուլում հասարակության մասնակցության ապահովումը ընտրական բարեփոխումների վերաբերյալ քաղաքական կամքի առկայության կարևորագույն ցուցիչ են: Այս տեսանկյունից ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության և Օրենսգրքի մշակման ընթացքին աջակցող Վենետիկի հանձնաժողովի կարծիքներն ու մտահոգությունները հիմնականում համընկնում են:

2016թ. մայիսի 10-ին քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ տարածել են կարծիք ընտրական օրենսգրքի դրույթների միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ: (Հասարակական կազմակերպություններ, 2016)

Կարծիքում մասնավորապես նշվում է, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանված ժամկետում չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով և չի հրապարակվել, իսկ պատասխանատու պետական մարմինները երկար ժամանակ հանրությունից գաղտնի են պահել դրա պատրաստ լինելու փաստը: Օրենսգիրքն առաջին անգամ հասանելի է դարձել 2016թ. փետրվարի 22-ին Վենետիկի

հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ անգլերեն լեզվով, որից հետո հայերեն տարբերակը հայտվել է ՀՀ Կառավարության կայքում՝ ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի նիստի օրակարգում ընդգրկվելու արդյունքում:⁹ Օրենսգրքի մշակման ընթացքում չեն պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ամրագրված կարգավորման ազդեցության գնահատմանը¹⁰, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հանրային քննարկումների կազմակերպմանն ու անցկացմանը¹¹ և ՀՀ նախագահի հրամանագրով նախատեսված կառավարության նիստին հարցեր ներկայացնելուն վերաբերող պահանջները:¹² Մինչև ՀՀ կառավարության կողմից օրենսգրքի նախագծին հավանության արժանացնելը, փաստաթղթի հեղինակները խուսափել են մասնակցել հասարակական կազմակերպությունների կողմից նախաձեռնված քննարկումներին: Օրենսգրքի հիմնական հարցերի շուրջ կոնսենսուս ձևավորելու նպատակով ընտրությունների ոլորտում փորձառություն ունեցող և ավելի քան 200 քաղաքացիական հասարակության կառույցների կողմից պատվիրակված ներկայացուցիչները մասնակցել են 4+4+4 (իշխանական կոալիցիա, ոչ իշխանական կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ) ձևաչափով քննարկումներին, որոնք նախաձեռնվել են քաղաքական ընդդիմության կողմից: Սակայն ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչների անզիջում դիրքորոշման պատճառով քննարկումները որևէ էական արդյունք չեն տվել: Չնայած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համապատասխան հանձնարարականների պահանջներին, ընտրական օրենսդրության փոփոխությունները չեն

⁹ ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի նիստի օրակարգ <https://www.e-gov.am/sessions/archive/2016/03/03/>

¹⁰ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27.1, մաս 2

¹¹ ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 296-Ն որոշում և ՀՀ կառավարության 2012 թ. ապրիլի 5-ի «Իրավական ակտերի օրենսգրքերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13 արձանագրային որոշում

¹² ՀՀ նախագահի 2007թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՅ-174-Ն հրամանագիր

իրականացվել ներառական կերպով, և շահագրգիռ բոլոր կողմերին հնարավորությունն է ընձեռվել ներդնել առավելագույն ջանքերը՝ ընտրական բարեփոխումների վերաբերյալ փոխհամաձայնության հասնելու նպատակով:

Քաղաքացիական հասարակության կողմից առանձնացված հիմնական խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող անձանց քվեարկության հնարավորության խտրական ապահովումը,

- ընտրողների ռեգիստրի թարմացման հետ կապված խնդիրները և առկա անճշտություններն ու բացակա անձանց քվեների հնարավոր օգտագործումը,

- հավասար ընտրական իրավունքի ապահովման և բազմակի քվեարկության բացառման մեխանիզմների անարդյունավետությունը,

- վարչական ռեսուրսի չարաշահումը և անհավասար հնարավորությունները,

- առանձին խմբերի ընտրողների կարծիք ձևավորելու հնարավորության բացակայությունը՝ քարոզչական տեղեկատվության անհասանելիության պատճառով (օր.՝ զինձառայողներ, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ),

- ընտրախախտումների կանխարգելման գործունե մեխանիզմների բացակայությունը,

- քվեարկության գաղտնիության պահպանման խնդիրները,

- դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների սահմանափակումը,

- ընտրախախտումների և քվեարկության արդյունքների արդյունավետ բողոքարկման մեխանիզմների ու հնարավորությունների բացակայությունը,

Քաղաքացիական հասարակության կարծիքի հրապարակման

օրը հրապարակվել է նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի Նախնական միացյալ կարծիքը ՀՀ ընտրական օրենսգրքի (2016թ. ապրիլի 18-ի դրությամբ) վերաբերյալ: (VENICE COMMISSION and OSCE/ODIHR, 2016) 2016թ. հունիսի 19-ին հրապարակվել է Հանձնաժողովի Երկրորդ նախնական միացյալ կարծիքը՝ 2016թ. մայիսի 25-ին ընդունված Ընտրական օրենսգրքի և 2016թ. հունիսի 30-ին ընդունված փոփոխությունների փաթեթի վերաբերյալ:

Վերահաստատելով Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների վերաբերյալ իրենց նախկին դիրքորոշումներն ու հանձնարարականները՝ 2016թ. մայիսի 10-ին հրապարակված Նախնական միացյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նշել են, որ ընտրական օրենսգրքի ընդունման ժամկետը չափազանց կարճ է: Թեև համապետական ընտրություններին ընդառաջ ընտրական օրենսդրության կայունությունը կարևոր է, սակայն կարևոր է նաև ժամանակ ունենալ ամբողջական, ներառական և հանրային քննարկումների համար՝ Էական փոփոխությունների վերաբերյալ փոխհամաձայնության և վստահության համար:

Միջազգային կառույցները նշել են, որ Օրենսգիրքը որոշակիորեն անդրադարձել է Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի նախկին հանձնարարականներին, մասնավորապես ընտրողների նույնականացման համակարգի բարելավման, ԿԸՀ կարգավորիչ իրավասությունների հզորացման, կանանց թեկնածության քվոտաների բարձրացման, դիտորդների հավատարմագրումը կամայական վերացնելու հնարավորություն տվող դրույթների հեռացման և քարոզչության կանոնների համակարգման տեսանկյունից:

Այնուամենայնիվ, նրանք արձանագրել են ընտրացուցակների ճշգրտության հետ կապված մտահոգությունները, դիտորդների իրավունքների սահմանափակումները և նոր տեխնոլոգիաների կիրառման անհստակությունը: Ըստ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, օրենսգիրքը չի անդրադառնում ընտրական վեճերի և

բողոքարկումների լուծման արդյունավետ մեխանիզմների հետ կապված հանձնարարականներին, քարոզչության ֆինանսավորման թափանցիկությանը և հաշվետվողականությանը, վարչական ռեսուրսների չարաշահումների կանխման երաշխիքներին և լրատվամիջոցների դերին:

«Կայուն մեծամասնության» ապահովման կարգավորումները համարվել են չափազանց բարդ: Ընդհանուր առմամբ միջազգային կառույցները խորհուրդ են տվել.

- վերանայել կոալիցիաների կազմման նկատմամբ դրված անհարկի սահմանափակումները,
- արտերկրում գտնվող անձանց փոխարեն քվեարկության վերաբերյալ կասկածների փարատման նպատակով հնարավորություն ընձեռնել արդյունավետորեն ծանոթանալ քվեարկության մասնակիցների ցուցակին՝ առանց անձի գաղտնիության խախտման,
- ապահովել նոր տեխնոլոգիաների արդյունավետ և աստիճանական ներդրումը, ներառյալ ձեռքբերումը, փորձարկումը, համապատասխան անձանց վերապատրաստումը և հանրության իրազեկումը,
- վերացնել դիտորդների համար նախատեսված ստուգարքները և կանոնադրական խնդիրների նկատմամբ եռամյա պահանջը,
- ապահովել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախությունը՝ սահմանելով, որ նախագահի կողմից ԿԸՅ-ի անդամների նշանակման դեպքում վերջինս խորհրդակցություններ անցկացնի Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների հետ,
- վերանայել կանանց ներկայացվածության քվոտան՝ ապահովելով նրանց արդյունավետ բաշխումը ընտրական ցուցակում,
- պարզեցնել քվեարկության և ձայների ամփոփման

գործընթացը և քվեարկության արդյունքների սահմանումը,

- ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից մասնակցությունը օրենսգրքի փոփոխությունների գործընթացում:

2016թ. հուլիսի 19-ին հրապարակված երկրորդ նախնական միացյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը, գնահատելով նախորդ փաստաթղթում ներկայացված հանձնարարականների կատարումը, նշել են, որ դրանց զգալի մասը հաշվի է առնվել, մասնավորապես՝ ընտրությունների առաջին փուլից հետո քաղաքական կոալիցիաների ձևավորման համար տրամադրվող ժամկետը կրկնապատկվել է (3 օրվա փոխարեն նախատեսվել է 6 օր), երկրորդ փուլից առաջ դաշինքների կազմման ժամկետը երկարացվել է երեք օրով՝ դարձվելով 5 օր, սահմանվել է քվեարկություն կատարած ընտրողների ցուցակներին ծանոթանալու հնարավորություն, դիտորդների համար նախատեսված ստուգարքը հանվել է և կրճատվել է դիտորդական կազմակերպության կանոնադրական նպատակների հետ կապված պահանջի ժամկետը՝ սահմանելով 1 տարի, հանրապետության նախագահի կողմից ԿԸՅ-ի նախագահին և անդամներին նշանակելու դեպքում նախատեսվել է խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցելու պահանջ, ընտրական վարչարարություն իրականացնող պաշտոնյաների անկախությունն ամրապնդվել է նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերի սպառնիչ ցանկի ներկայացմամբ, կուսակցությունների ցուցակներում կանանց ներկայացվածության համար 25-ի փոխարեն սահմանվել է 30 տոկոս քվոտա, իսկ համապետական ցուցակի համար 4-ի փոխարեն նախատեսվել է, որ յուրաքանչյուր 3 թեկնածուից մեկը պետք է իգական սեռի ներկայացուցիչ լինի, ԿԸՅ-ն պարտավորվել է հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների, ընտրողների համար ուսուցողական նյութեր պատրաստել և հրապարակել, ընդունվել են կարևոր կարգավորումներ կապված քարոզարշավների, դրանց

Ֆինանսավորման, թեկնածուներին գրանցումից հանելու, դիմում-բողոքների գործընթացին: Միջազգային կառույցները նաև կարևոր են համարել 2016թ. աշնան ՏԻՄ ընտրությունների ժամանակ նոր տեխնոլոգիաների կիրառման փորձարկման հնարավորությունը, որը նախատեսվել էր Ընտրական օրենսգրքով, ընդգծելով նաև նոր դրույթները տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ օրենքներին և չափանիշներին համապատասխանեցնելու, սարքավորումների հանրային փորձարկման և սերտիֆիկացման, արտակարգ իրավիճակների պլանավորման, հանձնաժողովի անդամների պատշաճ վերապատրաստման, ընտրողների և վստահված անձանց շրջանում իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ 2016թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ քվեարկության նոր կարգի փորձարկում տեղի չունեցավ, այն նախատեսված է 2017թ. փետրվարին ՏԻՄ ընտրությունների ժամանակ, ինչը փոփոխությունների կամ վերանայման համար բավարար ժամանակ չի ապահովում մինչև ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները:

Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նաև արձանագրել են, որ իրենց կողմից ներկայացված մի շարք, մասնավորապես, ներքոնշյալ հանձնարարականներ, հաշվի չեն առնվել կամ թերի են կատարվել.

- Դիտորդական կազմակերպությունների կանոնադրական նպատակներում ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին դրույթ ներառելու պահանջի հանելը,
- Վերանայել հետընտրական կոալիցիայում ներգրավվող քաղաքական ուժերի թվի սահմանափակումը,
- Վերանայել կուսակցությունների և դաշինքների համար նախատեսված ընտրական տարբեր շեմերը,
- Դիտարկել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին թեկնածուների սովորական ցուցակում ներառելու հնարավորությունը՝ փոքրամասնությունների ձայների միջոցով

խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը փոխելու հնարավորությունից խուսափելու համար,

- Թույլատրել քաղաքացիների խմբերի կողմից թեկնածուների առաջադրումը,
- Օրենսգրքի 45-րդ հոդվածում ներառել ԿԸՀ-ի փոխնախագահի, քարտուղարի և ՏԸՀ նախագահի, փոխնախագահի և քարտուղարի հեռացման հիքերը,
- Վերանայել վաղաժամկետ ընտրությունների դեպքում թեկնածուների ցուցակների գրանցման համար փաստաթղթերի ներկայացման ժամկետները,
- Նախատեսել վարչական ռեսուրսների չարաշահման ընդհանուր արգելք,
- Դիտորդների և ՉԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման համար նախատեսել ողջամիտ ժամկետներ, ներառյալ նաև ընտրությունների երկրորդ փուլի համար,
- Աղյուսակավորման գործընթացի թափանցիկության մեծացման նպատակով ներառել լրացուցիչ միջոցներ,
- Երևանի, Գյումրիի և Վանաձորի ավագանիների ընտրությունների համար նվազեցնել ընտրվելու և ընտրական գրավը վերադարձնելու շեմը,
- Վերանայել Երևանի, Գյումրիի և Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ հաղթողին լրացուցիչ տեղեր տալու հնարավորությունը:

Փաստաթղթում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նշել են, որ Ընտրական օրենսգիրքը ընդունվել է նշանակալից մեծամասնության կողմից և դրան հաջորդել է իշխանական և ընդդիմադիր կուսակցությունների լայն քաղաքական

համաձայնությունը ժողովրդավարական ընտրությունների նախապայմանների ուժեղացման միջոցների վերաբերյալ: Քաղաքացիական հասարակությունը բանակցություններում կառուցողական ներգրավվածություն է ունեցել, թեև վերջնական Չամաձայնությունը չի ստորագրել:

Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց վերջին հայտարարությամբ¹³ հստակ նշել են Չամաձայնությունը չստորագրելու պատճառները և հիմնավորումները, որոնք վկայում են, որ ընտրական գործընթացների վերաբերյալ լայն հասարակական համաձայնություն չի ձևավորվել:

2003թ.-ից ի վեր միջազգային կառույցների կողմից ներկայացվել է ավելի քան 250 հանձնարարական, որից ավելի քան 60-ը սույն օրենսգրքի վերաբերյալ:

Սույն հետազոտության մեջ գնահատվել է 2003թ.-ից ի վեր ներկայացված գնահատականների արդիականությունը և իրականացումը:

Մատչելիություն. Ընտրատեղամասերի մատչելիության վերաբերյալ հանձնարարականներ են ներկայացվել ԵԽԽՎ-ի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի Հանձնաժողովի կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկվել էր հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրատեղամասերը և քվեատուփերը դարձնել հասանելի: Ինչպես նաև առաջարկվել է, որ նրանք, ովքեր հիվանդանոցում են կամ ֆիզիկապես անկարող են հասնել ընտրատեղամաս, հնարավորություն ունենան օգտվել քվեարկելու իրենց իրավունքից՝ շարժական քվեատուփերի կամ այլ միջոցով: Օրենսգրքով սահմանվում է միայն հիվանդանոցներում ստացիոնար բուժում ստացող հիվանդների քվեարկության հնարավորությունը: Տեղամասերի մեծ մասը անմատչելի է անվասայլակով տեղաշարժվող ընտրողների համար: Ընտրական

¹³ Հայտարարություն ընտրական օրենսգրքի և դրա շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ, <http://transparency.am/hy/news/view/1600>

օրենսգրքի երկրորդ ընթերցումից առաջ առաջարկվել է օրենսգրքով ամրագրել, որ տեղամասային կենտրոններն ընտրվեն հաշվի առնելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույն քվեարկելու հնարավորությունը, սակայն կառավարությունն այն մերժել է՝ պատճառաբանելով, որ ամբողջ հանրապետության տարածքում մատչելի տեղամասեր ապահովվելն անհնար է: Տեղամասային կենտրոնների մատչելիության ապահովման համար պատասխանատու է սահմանվել տեղական ինքնակառավարման մարմինը, սակայն հստակ չէ չափանիշների ներկայացման և վերահսկողության մեխանիզմը:

2016թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ԿԸՀ-ն ընդունել է քվեարկության դժվարություններ ունեցող անձանց համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին որոշում, որը սակայն պարտադիր կատարման մեխանիզմներ չի սահմանում:¹⁴

Ընտրական վեճերի լուծում. Վեճերի լուծման գործընթացի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը բազմաթիվ հանձնարարականներ են ներկայացրել: Հանձնարարականները վերաբերել են բողոքարկման գործընթացի հստակեցումներին, ներառյալ, թե ով և ինչպես կարող է դիմումներ և բողոքներ ներկայացնել, բողոքարկման ժամկետներին, բողոքների պատշաճ քննությանը և հիմնավորված որոշումների կայացմանը, ընտրախախտումներ կատարողներին քրեական և/կամ վարչական պատասխանատվության ենթարկելուն, բողոքների արդյունավետ քննության նպատակով համապատասխան պետական կառույցների միջև համագործակցության խորացմանը: Առաքելությունները ԿԸՀ-ին կոչ են արել ավելի ակտիվ դեր ստանձնել բողոքների քննության ընթացքում:

Որպես կանոն, ՀՀ ԿԸՀ-ն, ԸԸՀ-ները և իրավապահ մարմինները միայն ձևական միջոցառումներ են ձեռնարկում ընտրախախտումների հաղորդումների ուղղությամբ, և

¹⁴ http://res.elections.am/images/dec/16.136_N.pdf

իրականացված քայլերն ըստ եռթյան ուղղված էին խախտումների վերաբերյալ փաստերի ժխտմանը, քան պատշաճ քննություն իրականացնելուն, մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելուն:

Չնայած տեղական դիտորդներին բողոքներ և դիմումներ ներկայացնելու իրավունքի ընձեռնման վերաբերյալ հորդորներին՝ նրանց նման իրավունք չի տրվում նաև սույն օրենսգրքով, և դիտորդները կարող են բողոքներ ներկայացնել միայն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքերում:

Թեև բողոքարկման ժամկետների և պայմանների հետ կապված Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից Նախնական միացյալ կարծիքում ներկայացված որոշ հանձնարարականներ 2016թ. Ընտրական օրենսգրքում հաշվի են առնվել, սակայն քաղաքացիների խմբերին բողոքարկման իրավունք շնորհելու, նաև վերահաշվարկի ժամկետների վերաբերյալ հանձնարարականները չեն կատարվել:

Քարոզարշավի Ֆինանսավորում. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացվել են մի շարք հանձնարարականներ, որոնք առաջարկում են քարոզարշավի ֆինանսավորման կարգավորման վերաբերյալ ավելի հստակ դրույթներ սահմանել, այդ թվում՝ նախատեսելով ծախսերի ցանկի ընդլայնում՝ ավելի մանրամասն ներկայացնելու համար, հաշվետվության պահանջների և պատշաճ վերահսկման ցուցանիշների հստակեցում: Օրենսգրքով հնգապատկվել է ֆիզիկական անձանց կողմից կուսակցություններին նվիրաբերվող գումարի առավելագույն չափը, միաժամանակ հնգապատկվել է քարոզարշավի ֆինանսավորման թույլատրելի առավելագույն գումարը, այնուամենայնիվ, քարոզարշավի ծախսերի ցանկը չի ներառում անձնակազմի վարձատրությունը, գրասենյակի վարձակալությունը կամ ճանապարհածախսը:

Թեկնածուների Գրանցում. Թեկնածուների գրանցման գործընթացի վերաբերյալ ներկայացվել են մի շարք

հանձնարարականներ, այդ թվում՝ թեկնածուներին ներկայացվող պահանջների (ստորագրություններ, գրավ, ժամկետներ), թեկնածուների գրանցումը չեղյալ հայտարարելու կարգի վերաբերյալ: Ստորագրություններ ներկայացնելու պահանջը վերացվել է 2003թ.-ին, սակայն ընտրագրավի գումարի չափը դեռևս խնդրահարույց է, իսկ գրավի վերադարձման համար սահմանված նվազագույն շեմը նվազեցվել է, բայց ոչ բավարար չափով: Նույն կերպ նվազեցվել է ՀՀ-ում մշտական բնակության ժամանակահատվածի պահանջը, սակայն օրենսգրքով սահմանվող չորս տարին ևս համարվում է չարդարացված: Արտահերթ ընտրությունների ժամանակ, օրենսգրքով սահմանված թեկնածուների գրանցման ժամկետը խիստ սեղմ է, ինչը սահմանափակում է ազատ մրցակցության հնարավորությունը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաքելությունն անդրադարձել է թեկնածուների գրանցումը չեղյալ համարելու կարգավորմանը՝ թեկնածուների պարտադրված հրաժարականից խուսափելու համար: Թեև թեկնածուների գրանցումը չեղարկելու հիմքերը հստակեցված են, փոխարենը ավելի ազատ է ինքնաբացարկի հնարավորությունը, որը տարածված է հատկապես ՏԻՄ ընտրությունների ընթացքում՝ ենթադրաբար անազնիվ մրցակցության պատճառով:

Վենտրոնական ընտրական հանձնաժողով.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը ԿԸՀ վերաբերյալ ներկայացրել են մի քանի հանձնարարական: 2016թ. սահմանադրական փոփոխություններով և վերջին Ընտրական օրենսգրքով փոխվել է ԿԸՀ-ի ձևավորման կարգը: Այժմ ԿԸՀ-ի անդամներին նշանակում է Ազգային ժողովը՝ մեծամասնությամբ, ինչի հետ կապված միջազգային դիտորդական առաքելությունները կարևորում են նոր ձևավորվող ԿԸՀ-ի նկատմամբ խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցությունների վստահությունը: ԿԸՀ-ի հետ կապված մյուս հանձնարարականներն իրականացվել են:

Քաղաքացիական դիտորդներ. Անկախ դիտորդների կողմից դիտորդություն իրականացնելու վերաբերյալ ներկայացվել էին մի

քանի հանձնարարականներ:

Միջազգային դիտորդական առաքելությունները և Վենետիկի հանձնաժողովը գտնում էին, որ պետք է վերացվի դիտորդների կողմից պարտադիր ստուգարքի հանձնումը և մեկ դիտորդի կողմնակալության պատճառով դիտորդական կազմակերպության հեռացման հնարավորությունը: 2016թ. հունիսի 30-ին ընդունված փոփոխություններով վերացվեց դիտորդների համար սահմանված ստուգարքի պահանջը, միաժամանակ սահմանվում է, որ Դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության աջակցելու, ինչպես նաև Օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Չարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը նախկինում պաշտպանում էր դիտորդների ավելի քիչ իրավունքների գաղափարը և մերժում էր քվեարկության ընթացքում դիտորդների միջամտության ցանկացած հնարավորություն: Իր վերջին նկատառումներում Չանձնաժողովը առաջարկում է դիտորդներին ավելի շատ իրավունքներ ընձեռնել, ներառյալ ընտրական վեճերով ընտրական հանձնաժողովներին և դատարաններին դիմելու իրավունքը, այդ թվում՝ ընտրությունների արդյունքների բողոքարկման հարցով: Այնուամենայնիվ, Ընտրական օրենսգիրքը ավելի սահմանափակեց դիտորդների ներգրավվածությունը՝ դիտորդական կազմակերպությունների համար սահմանելով առնվազն մեկ տարի ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ կանոնադրական նպատակներ ունենալու պահանջ: Օրենսգիրքը դիտորդներին զրկեց հանձնաժողովի նախագահին առաջարկություններ և դիտողություններ ներկայացնելու իրավունքից, սահմանվեց հանձնաժողովի քվեարկությամբ

տեղամասից դիտորդին հեռացնելու դրույթը, թույլատրելով դիտորդին միայն պահանջել արձանագրել իր բողոքը գրանցամատյանում: Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը իրենց միացյալ կարծիքներում դրական չեն համարել հասարակական կազմակերպությունների կանոնադրական նպատակների հետ կապված պահանջը՝ այն համարելով անհարկի սահմանափակում, թեև դրական են գնահատել սահմանված ժամկետի կրճատումը:

Կոալիցիաներ և դաշինքներ. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը հանձնարարականներ են ներկայացրել Նաև Ընտրական օրենսգրքով սահմանված Նախընտրական կոալիցիաների և հետընտրական դաշինքների անդամների թվի և դրանց կազմավորման ժամկետների վերաբերյալ: Մասնավորապես, Նրանք առաջարկել են վերանայել կոալիցիաների անդամների առավելագույն (երեք) թվի վերաբերյալ սահմանափակումը, երկարաձգել ընտրությունների առաջին փուլից հետո կոալիցիա կազմելու, ինչպես նաև ընտրությունների երկրորդ փուլից առաջ դաշինքներ ստեղծելու ժամկետները: Առաջարկվել է նաև տեղական ընտրությունների համար իջեցնել ընտրվելու շեմը և կուսակցություններին տալ կոալիցիաներ ստեղծելու հնարավորություն: Օրենսգրքում հաշվի են առնվել միայն կոալիցիաների ձևավորման ժամկետների և երկրորդ փուլից առաջ Նախընտրական դաշինքների կազմման ժամկետների հետ կապված հանձնարարականները:

Նախընտրական քարոզարշավ. Նախընտրական քարոզարշավների կարգավորման հետ կապված մի քանի հանձնարարականներ են ներկայացվել, այդ թվում՝ քարոզչական նյութերի տարածման, քվեարկության օրը, հատկապես, ընտրատեղամասերին մոտ տարածքներում քարոզարշավի իրականացման արգելքի անհրաժեշտության, քարոզարշավի ընթացքը կարգավորող նորմերի խախտումների և կեղծ տեղեկատվության տարածման համար պատասխանատվության սահմանման, ինչպես նաև քարոզարշավի ժամանակահատվածի

հստակեցման վերաբերյալ: Համապատասխան օրենսդրական կարգավորումներն իրականացվել են, սակայն դրանց իրագործումն արդյունավետ չէ: Օրենսգրքով սահմանվում է, որ պարտադիր չէ քարոզչական պաստառների հեռացումը քվեարկության օրը և նախորդ օրը, ինչը հակասում է այդ օրերին քարոզչությունն արգելելու դրույթին: Բացի այդ, օրենսգրքով չարգելված ժամանակահատվածում իրականացվող քարոզչությունը որևէ կերպ չի կարգավորված:

Ընտրական հանձնաժողովներ. Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացվել են բազմաթիվ հանձնարարականներ, որոնք վերաբերում են հանձնաժողովների կողմից ընտրությունների անցկացմանը: Այս հանձնարարականները վերաբերում էին ընտրական հանձնաժողովների կազմին, հանձնաժողովների անդամների հեռացմանը, ընտրական խախտումների համար հանձնաժողովի անդամների պատասխանատվությանը, շարունակական վերապատրաստումներին, որոշումների կայացման թափանցիկությանը, հանձնաժողովի ղեկավար պաշտոնների արդար բաշխմանը, և ԸԸՀ տարածքների առանձնացմանը կենտրոնական և տեղական իշխանության շենքերից:

Ինչ վերաբերում է ՏԸՀ կազմին, ըստ տեղական դիտորդների, չնայած անդամների թվացյալ բազմակուսակցականությանը, ՏԸՀ-ները հիմնականում ծառայում են իշխող` Հանրապետական կուսակցությանը և հակված չեն խախտումների դեպքում որևէ գործողություն ձեռնարկել:

Նոր Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության գործընթացի արմատական փոփոխության համատեքստում առավել կարևորվում է հանձնաժողովի անդամների վերապատրաստումը:

Ընտրական գործընթացների արդարությունը և իրավականությունը (Integrity). ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և ԵԽԽԿ-ն ընտրական գործընթացների արդարության և ընդհանուր իրավականության վերաբերյալ որոշ հանձնարարականներ են

ներկայացրել, հատկապես շեշտադրելով ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար քաղաքական կամքը: Ընտրական գործընթացների արդարության և իրավականության տեսանկյունից հարկ է նշել, որ Ընտրական օրենսգիրքն ըստ էության չի անդրադառնում այն հիմնախնդիրներին, որոնք հանդիսացել են ընտրական գործընթացների նկատմամբ անվստահության պատճառը:

Յանձնարարականների իրականացում. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, Վենետիկի հանձնաժողովի և ԵԽԽՎ-ի կողմից ՀՀ իշխանություններին կոչ է արվել իրականացնել իրենց կողմից ներկայացրած հանձնարարականները և համագործակցել քաղաքացիական հասարակության ու քաղաքական կուսակցությունների հետ՝ ապահովելով նրանց մասնակցությունը, ինչպես նաև համագործակցել ԵԽԽՎ-ի և Վենետիկի հանձնաժողովի հետ՝ հանձնարարականների իրականացման մոնիթորինգի գործընթացում: Նոր Ընտրական օրենսգրքի նախնական մշակման ոչ ներառական գործընթացը, և հետագա մասնակցության անարդյունավետությունը ցույց տվեց, որ այս հանձնարարականները անտեսվել են, թեև միջազգային կառույցները Ընտրական օրենսգրքի շուրջ իշխանության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության համագործակցության համար մեծ ջանքեր գործադրեցին և այն համարում էին աննախադեպ և հաջողված:

Սահմանադրական դատարանի որոշումների իրականացում և օրենսդրական համապատասխանություն. Վենետիկի Հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ երկու հանձնարարականները հասցեագրված են Սահմանադրական դատարանի որոշումների արտացոլմանը ընտրական օրենսգրքում և օրենսդրական անհամապատասխանությունների վերացմանը: Հանձնարարականներից ոչ մեկը չի իրականացվել:

Լրատվամիջոցներ. Վենետիկի հանձնաժողովի, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և ԵԽԽՎ-ի կողմից բազմաթիվ հանձնարարականներ են ներկայացվել լրատվական դաշտի կարգավորման վերաբերյալ,

այդ թվում՝ լրատվամիջոցների ազատության երաշխավորման, եթերաժամանակի բաշխման, անկողմնակալ լուսաբանման ապահովման, կարգավորող մարմինների անկախության, արդար արտոնագրման գործընթացին, ինչպես նաև կանանց մասնակցության ավելի լայն լուսաբանմանը:

Բացառությամբ որոշ առցանց լրատվամիջոցների, մի քանի տպագիր մամուլի և մեկ մարզային հեռուստաընկերության, բոլոր լրատվական միջոցները վերահսկվում են իշխանության կողմից: Լրագրողների անկախությունը չի կարող ապահովվել, եթե նրանք ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում անկախ չեն և նրանց նկատմամբ բռնությունները չեն պատժվում: Նախընտրական քարոզարշավների հավասարակշռված լուսաբանումը հետևողականորեն չի իրականացվում, և այն մեծապես կախված է ԸՄԴԱ-ի ճնշումից: Լրատվամիջոցներին վերաբերող լրացուցիչ կարգավորումներ են սահմանվել մասնավոր լրատվամիջոցների համար, օրինակ՝ ՅՌԱՅ-ի միջոցով: Ընտրական օրենսգրքով զանգվածային լրատվամիջոցների հետ կապված նոր մարտահրավեր է ՉԼՄ ներկայացուցիչների նախնական հավատարմագրման պահանջը և յուրաքանչյուր լրատվամիջոցը ներկայացնող անձանց թվի սահմանափակումը:

Չինված ուժեր. Չինված ուժերի մասին հանձնարարականները վերաբերում են զինվորականների ընտրելու ազատ կամքի իրավունքին և ընտրական գործընթացների ընթացքում նրանց պարտավորություններին: Թեև նոր Ընտրական օրենսգիրքը, ինչպես և նախորդ օրենսգիրքը, սահմանում են, որ զինվորները տեղամաս ներկայանում են ոչ շարային կարգով, այնուամենայնիվ նրանց ազատ կամարտահայտումը չի ապահովվում, քանի որ տեղամաս են բերվում խմբերով՝ հրամանատարի հսկողությամբ: Ընտրական օրենսգիրքը նաև արգելում է գորամասերում հաշվառված ընտրողների թվի, նրանց քվեարկության տեղամասերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

Կանանց մասնակցությունը. ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված հանձնարարականները վերաբերել են քվոտաների

միջոցով կանանց մասնակցության խթանմանը, ինչպես նաև համապատասխան մանդատների ապահովմանը: Ընտրական օրենսգրքով վերանայվել է կուսակցությունների ընտրական ցուցակներում մեկ սեռի ներկայացվածության չափը՝ սահմանելով, որ մեկ սեռի ներկայացուցիչների թիվը չի կարող գերազանցել 70%-ը՝ 2011թ. օրենսգրքով նախատեսված 80%-ի փոխարեն: Ի տարբերություն 2011թ. Ընտրական օրենսգրքի, նոր Օրենսգիրքը սահմանում է նաև երաշխիքներ քվեարկությունից հետո ՀՀ Ազգային ժողովում, ինչպես նաև Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքների ավագանում, երկու սեռերի ներկայացվածության վերաբերյալ: Ըստ այդմ ընտրված թեկնածուի ինքնաբացարկի դեպքում մանդատը փոխանցվում է նույն սեռի հաջորդ թեկնածուին, եթե թեկնածուի ինքնաբացարկի արդյունքում մեկ սեռի ներկայացվածությունը կարող է նվազել 25%-ից: Միջազգային կառույցները նշում են, որ կանանց իմաստավոր մասնակցությունն ապահովելու համար պետք է սահմանվեր ավելի բարձր քվոտա:

Ոստիկանություն. Ոստիկանների վերապատրաստման և քվեարկության օրը ընտրատեղամասերում նրանց պարտականությունների մասին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացվել է երկու հանձնարարական: Օրենսգրքով հստակեցվել է ոստիկանների դերը տեղամասի տարածքում, որն արտացոլվում է նաև ոստիկանության աշխատակիցների համար մշակված ուղեցույցում, որը սակայն ամփոփ և հստակ չի ներկայացնում ոստիկանության պարտականությունների, գործառույթների ողջ ծավալը՝ լայնածավալ ընտրական խախտումների կանխման, բացահայտման և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Տեղամասային կենտրոններ. Տեղամասային կենտրոնների վերաբերյալ ներկայացված երեք հանձնարարականները ուղղված էին կողմնակի անձանց ներկայությանը, թափանցիկ արկղերի կիրառմանը և ընթացքի վերահսկման համար նպատակահարմար ընտրատեղամասի տարածքների տրամադրմանը: Երեք հանձնարարականներն էլ իրականացվել են, սակայն միայն

թափանցիկ արկղերի օգտագործումն է արդյունավետ:

Խախտումների կանխարգելում. Մեկ հանձնարարական ներկայացվել է խախտումների կանխարգելման և դրանց հայտնաբերման դեպքում անհապաղ քայլերի ձեռնարկման վերաբերյալ: Հանձնարարականը չի իրականացվել:

Վստահված անձինք. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և ԵԽՏԿ-ն վստահված անձանց վերաբերյալ երկու հանձնարարական են ներկայացրել: Ըստ հանձնարարականների, պետք է կարգավորվեր ընտրական հանձնաժողովի աշխատանքներին վստահված անձանց անպատեհ միջամտելու, ինչպես նաև նրանց վերապատրաստման համար ձեռնարկների մշակման հարցը: Հատկապես իշխող կուսակցության կամ գործող թեկնածուի վստահված անձանց կողմից անհարկի միջամտության հարցը արձանագրվել է տեղական դիտորդների կողմից: Ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ վստահված անձը ևս կարող է դուրս հրավիրվել տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդհանուր ձայների 2/3-ով՝ ընտրական գործընթացը խոչընդոտելու համար: Օրենսդրական կարգավորման կիրառումից հետո հնարավոր կլինի գնահատել սույն հանձնարարականի իրականացումը:

Արդյունքների հրապարակում. ԵԽՏԿ-ն, Վենետիկի Հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳը հինգ հանձնարարական են ներկայացրել արդյունքների հրապարակման վերաբերյալ: Այս հանձնարարականները ներառում էին ընտրության արդյունքները ընտրատեղամասերում փակցնելը, արդյունքներն ըստ ընտրատարածքների հրապարակելը և արձանագրությունները ժամանակին կազմելը: Նոր Ընտրական օրենսգրքի հետ կապված առաջարկվել է նաև նախնական և վերջնական արդյունքները հարմար ձևաչափով հրապարակել ԿԸՀ-ի կայքում՝ ըստ տեղամասերի և շրջանների: Այս հանձնարարականներն իրականացվել են նախկինում և արտացոլվել են նաև 2016թ. Ընտրական օրենսգրքում:

Խախտումների արձանագրումը. Խախտումների արձանագրման վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը և

ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ը առաջարկել են, որ քվեարկության ընթացքի խախտումները հանձնաժողովի անդամներից մեկի կամ վստահված անձի պահանջով գրանցամատյանում արձանագրվեն: Օրենքը արտացոլում է հանձնարարականը, իսկ նոր Օրենսգիրքն ավելացնում է դիտորդներին, սակայն հանձնաժողովները դժկամությամբ են իրականացնում: Հստակ չէ նաև, թե արդյոք հետագա քննության են ենթարկվում գրանցամատյանում արձանագրված խախտումները:

Ընտրական իրավունք. Ընտրական իրավունքի հետ կապված հանձնարարականները վերաբերում են մեծամասնական կարգով թեկնածուների համար զինվորականների քվեարկության թույլատրմանը, արտասահմանում բնակվող քաղաքացիների քվեարկության իրավունքին, բանտարկյալների քվեարկության իրավունքին և երկքաղաքացիություն ունեցող անձանց քվեարկության իրավունքին: Արտասահմանում գտնվող անձանց քվեարկության իրավունքի հետ կապված ավելացել է միայն արտասահմանում ուսման մեջ գտնվող զինծառայողների քվեարկության հնարավորությունը: Սահմանադրության փոփոխություններից ելնելով Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ քվեարկության իրավունք ունեն նաև ոչ ծանր և միջին ծանրության հանցանքների համար դատապարտված անձինք: Ընտրությունների օրը Հայաստանում գտնվող, երկքաղաքացիություն ունեցող անձինք կարող են քվեարկել, սակայն չունեն ընտրվելու իրավունք:

Քվեարկության արդյունքների ամփոփում. Քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ մի քանի հանձնարարականներ են ներկայացվել, որոնք վերաբերվել են թափանցիկության, արդյունավետության և հետևողականության ապահովմանը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի դյուրինացմանը, մինչդեռ արդյունքների ամփոփումը նոր Ընտրական օրենսգրքով ավելի է բարդացել՝ հաշվի առնելով քվեարկության կարգի և ըստ այդմ ձայների ամփոփման նոր համակարգի կիրառումը:

Վարչական ռեսուրսների օգտագործում. Վարչական

ռեսուրսների օգտագործման հետ կապված տրվել են մի շարք հանձնարարականներ, որոնք վերաբերում են կուսակցության և պետության տարանջատմանը, քարոզչության և ի պաշտոնե իրականացվող պարտականությունների բաժանմանը, քարոզչության նպատակով տեղական և կենտրոնական իշխանության ռեսուրսների ազնիվ օգտագործմանը, վերստուգիչ և վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանը: Այս ուղղությամբ հանձնարարականների իրականացումը մինչ այժմ անարդյունավետ է եղել: Օրենսգրքով կարգավորումների որոշակի ընդլայնում է տեղի ունեցել, որի արդյունավետությունը դեռևս դժվար է գնահատել:

Ընտրակաշառք. Ընտրակաշառքի վերաբերյալ ներկայացված հանձնարարականներից են ընտրակաշառքի քրեականացումը և կանխման մեխանիզմների մշակումը, որոնք անարդյունավետորեն են իրականացվել: Հատկապես խնդրահարույց է ընտրակաշառքի արգելումը միայն Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Ընտրողների իրազեկում. Առաջարկվել է իրականացնել ընտրողների շարունակական իրազեկում, հատկապես՝ քվեարկության գործընթացը սահմանող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

Ընտրացուցակ. Ընտրացուցակների վերաբերյալ ներկայացվել են բազմաթիվ հանձնարարականներ, որոնցից են ընտրագանգվածների սահմանումը, էլեկտրոնային ընտրացուցակների օգտագործումը և դրանց ճշգրտման համար համապատասխան մեխանիզմի ստեղծումը, ընտրացուցակների հասանելիության ապահովման ողջամիտ տարբերակի սահմանումը: Հրաժարվելով ընտրացուցակները մաքրելու ընդդիմության պահանջից, իշխանությունը համաձայնել է, որ ընդդիմության կողմից այդ գործառույթն իրականացնելու դեպքում բացակա անձանց տվյալները կներառվեն տեղամասում գտնվող տեխնիկական սարքավորման տվյալներում: Օրենսգրքով սահմանվել է նաև քվեարկության ավարտից հետո ստորագրված ցուցակների

հրապարակում, ինչը ընդդիմության և քաղաքացիական հասարակության երկար տարիների պայքարի արդյունքն էր:

Քվեարկության գործընթացը. Քվեարկության գործընթացին առնչվող մի շարք հանձնարարականներ են արվել, այդ թվում՝ առաջարկվել է ապահովել քվեաթերթիկի անվտանգությունը, ընտրողների մատների թանաքապատումը, նշագրել քվեաթերթիկները, մշակել այլ անձի օգնությամբ քվեարկության և բազմակի քվեարկության կանխարգելման մեխանիզմներ, դյուրինացնել քվեարկության գործընթացը: Ըստ ՀՀ կառավարության, Էլեկտրոնային գրանցման համակարգը կանխարգելում է բազմակի քվեարկության հնարավորությունը, ինչն էլ արդարացնում է քվեարկության գործընթացի բարդացումը: Սակայն միանշանակ է, որ թե քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացն անհարկի բարդացել են:

Եզրակացություն

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) Հայաստանյան ընտրությունները դիտարկում են 1996 թվականից ի վեր, և այս առաքելությունների աջակցությամբ ընտրական օրենսդրությունը և ընտրությունների կազմակերպումը Էականորեն փոփոխվել են:

Նոր ընտրական օրենսգրքում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված որոշ հանձնարարականներ հաշվի են առնվել, սակայն որոշ հանձնարարականներ պատշաճ չեն ընդգրկվել:

Այնուամենայնիվ մտահոգիչ է ընտրական օրենսգրքի մշակման ընթացքում լայն քննարկումների բացակայությունը, որը կբերեր ոչ միայն օրենսգրքի բարելավմանը այլ նաև ընտրական գործընթացների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Հատկապես անհրաժեշտ է ապահովել քվեարկությանը մասնակցած անձանց վերաբերյալ տվյալների առկայության պայմաններում բացահայտված անճշտությունների և կեղծիքների բողոքարկման արդյունավետ հնարավորություն, վերացնել ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանափակումները, ապահովել ընտրական վեճերի արդյունավետ քննությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- OSCE/ODIHR. (1996). *Armenian Presidential Elections, 24 September 1996, Final report*. <http://www.osce.org/odihr/elections/armenia/14149?download=true>
- OSCE/ODIHR. (1999). *Republic of Armenia Parliamentary Election 30 May 1999 Final Report*. <http://www.osce.org/odihr/elections/armenia/14203?download=true>
- OSCE/ODIHR. (2003). *Republic Of Armenia Presidential Election 19 February and 5 March 2003, Final Report*. <http://www.osce.org/odihr/elections/armenia/14054?download=true>
- VENICE COMMISSION and OSCE/ODIHR. (2016, May 10). *PRELIMINARY JOINT OPINION ON THE DRAFT ELECTORAL CODE AS OF 18 APRIL 2016*. <http://www.osce.org/odihr/elections/armenia/239591?download=true>
- ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (2013). *Ընտրությունների միջազգային դիտարկում, Հայաստանի հանրապետություն և Նախագահի ընտրություններ, հայտարարություն, Նախնական հանգամանքների եվ եզրակացությունների վերաբերյալ, 19 փետրվարի, 2013 թ.* <http://www.osce.org/hy/odihr/elections/99677?download=true>
- ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (2007). *Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 12 մայիսի 2007 Վերջնական հաշվետվություն.* <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/26606?download=true>
- ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (2003). *Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 25 մայիսի 2003 Վերջնական հաշվետվություն.* <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/42371?download=true>
- ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (2012). *Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 6 մայիսի 2012, Վերջնական հաշվետվություն.* <http://www.osce.org/hy/odihr/elections/91962?download=true>
- ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (2013). *Հայաստանի Հանրապետություն, Նախագահի ընտրություններ 18 փետրվարի 2013, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկուլյոյց .* <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>
- ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ. (n.d.). *Հայաստանի Հանրապետություն, Նախագահի ընտրություններ 19 փետրվարի 2008, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկուլյոյց.* <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>
- Հասարակական կազմակերպություններ. (2016, մայիսի 10). *Կարծիք ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթների` միջազգային ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ.* <http://transparency.am/hy/news/view/1439>
- Բելսիսկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ԶԿ. (2015). *ԸՄԴԱ-ների Հանձնարարականների իրականացումը Հայաստանում 2003-2013թթ.* Վանաձոր.
- ՀՀ Կառավարություն. (2016). *ՀՀ Ընտրական օրենսգրքի նախածի.* http://parliament.am/draftreading_docs5/2/K-960_DR2.pdf

ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ /այսուհետ՝ ՋԲԱ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՋԲԱ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն:

ՋԲԱ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

«ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԾՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»

ՋՋ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59,

հեռ. (+374 322) 4 22 68; ֆաքս: (+374 322) 4 12 36,
Ինտերնետային կայքէջ: www.hcav.am,
Էլ. Փոստ: hcav@hcav.am

